

**Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ**

**ՋԻ ԲՈ Է ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

Հալածութիւնները շարքէն կը մնային հրատարակելիք հինգերորդ եւ վեցերորդ հատորները: Հինգերորդին վերնագիրն է՝ «Տիգրան»: Այն վէպն է՝ զոր երկար ատեն՝ Որբունի կ'ուզէր հրատարակել «Վարձու սենեակ» վերնագիրով: Կը հրատարակուի առանձին հատորով երբ պարագաները թոյլատրեն: Հոս վեցերորդն է որ կը ներկայացնենք: Իսկական հատոր մը չի կազմեր, եւ այդ է որ կարելի կը դարձնէ ԿԱՄի մէջ իր հրատարակութիւնը: Մեքենագրուած բնատիպը, զոր ունինք մեր տրամագրութեան տակ, վերջնական բնոյթ մը կը կրէ սակայն: Կը բաղկանայ 29 մեքենագրուած էջերէ, եւ ունի վերջին էջին՝ Որբունիի ստորագրութիւնը: Գլուխի էջին վրայ, Որբունիի անունին տակ՝ գրուած է նախ մեքենայով՝ ՄԱ-ԿԱԲՈՅԾԸ, որուն վրայ յետոյ մատիտով գիծ մը քաշուած է: Նոր վերնագիրը գրուած է գրիչով ատոր վերեւը՝ «Զի քո է կարողութիւն»: Տակը՝ մեքենագրուած՝ «Վէպ», «Փարիզ», ու թուականը՝ գրիչով՝ 1977, 4 Յուլիս: Որքան որ կը յիշենք՝ 1980ին է որ Որբունի յանձնած է մեզի մեքենագիր այս օրինակը, որ իր ձեռքով բազմաթիւ սրբագրութիւններ կը կրէ նաեւ: 1980ին է, ուրեմն իր արկածէն ետքը, որ մեքենագրած է տետրակի մը մէջ զտնուող այս էջերը, ու վերջաւորութեան իր ստորագրութիւնը դնելով՝ վեցերորդ հատորին վերջնական տարբերակը նկատած է զանոնք: Պատճառը անշուշտ այն ըլլալու է՝ որ այլեւս անկարող կը զգար ինքզինք շարունակութիւնը խմբագրելու, բայց պէտք չէ զանց առնել իր որդունը, ատով՝ վէպը վերջացած ու վերջնական նկատելու, հակառակ իր կարճութեան: Վերջին ամիսներուն, երբ աշխատելու իր կարողութիւնը ամբողջովին վերագտած էր, Որբունի դբադած է միայն իր Օրագրին մեքենագրութեամբ: Իր նպատակն էր այդ աշխատանքը վերջացնելէ յետոյ՝ շարքին վերջին հատորին անցնիլ, որ պիտի կոչուէր «Զրհեղեղէն անաջ», ու պիտի ունենար իբրեւ գլխաւոր դէմք՝ հայրը: (Զրհեղեղին ինչ րոյալը գրուած է «Սոսիսական օր մը» վէպին մէջ, Պէյրութ, 1974, էջ 65, Երբ մայրը կ'ըսէ. « հայրիկդ ալ կը գրէր...: Երկինքէն այնքան ջուր թափեցաւ անկէ ի վեր»):

1980ին երբ ԿԱՄի ատաղին թիւը կը պատրաստէինք, Որբունի ողջ էր տակաւին, ու մասամբ իրեն հետ վերանայած էինք «Մահազգ»ի բնատիպը: Վերջնական տարբերակը, ԿԱՄի մէջ հրատարակուած, վաւերացուած էր իր կողմէ: Յետ մահու հրատարակութիւնները սակայն այդ բախտը չեն կրնար ունենալ: Եւ նրբին հարց մը կը ծագի այդտեղ: Որովհետեւ ամէն ընթերցող գիտէ, եւ Որբունիի նախորդ հրատարակութիւնները, մանաւանդ՝ «Ասֆալթը» փաստ են ստոր, որ Որբունի չէր տիրապետեր իր նախադասութեան վազքը, ամենէն առաջ՝ անոր առաջին բխումովը: Որոչ պարագաներու՝ մեքենագիր տարբերակը բարեփոխութիւններ կը բերէր, բայց ո՛չ միշտ, եւ ո՛չ ամբողջովին: «Ասֆալթը»ի խղճալի վիճակը կը բացատրուի օրինակ անով՝ որ ո՛չ մէկ վերանայում ու սրբագրութիւն չէ կատարուած Որբունիին կողմէ առաջին հոսքէն յետոյ: Տպագրութեան պայմաններն ալ կացութիւնը չեն բարելաւած: Կը համարձակինք հոս յայտարարելու, որ ոճի մըն էր Որբունիի գործերուն հրատարակիչներուն կողմէ գործուած՝ Որբունիի էջերը հրատարակելը այնպէս՝ ինչպէս գտած են զանոնք: Խափանարարութիւն բառը տեղին պիտի ըլլար հոս: Որովհետեւ հրատարակիչի մը պարտականութիւնն է՝ իրեն յանձնուած ձեռագիրը հեղինակին հաւանութեամբ՝ տարրական կերպով գոնէ՝ կարգի բերելու: Այդ պարտականութիւնը ձգուեր է հաւանաբար տպագրական մեքենաներուն: Եւ հրատարակիչներու թերացումով՝ Որբունի մնացած է խոցելի ու խոցուած գրագէտ մը: Հրատարակիչներու պարտականութիւնն էր ըսինք, որովհետեւ երբ մէկը յանձն կ'առնէ գործի մը հրատարակութիւնը, երբ դոյզն չափով կը հաւատայ այդ գործին, յանձն պիտի առնէ նաեւ իր ժամանակը վատնել ուրիշի մը գործին վրայ, հեղինակին հետ աշխատանքի լծուիլ, առնուազն՝ լեզուական աչքառու թերացումները շտկելու համար: Եւ եթէ չի հաւատար այդ գործին, այն ատեն՝ չի հրատարակեր զայն: Հաւատքը գործի ամբողջութեան կը վերաբերի, եւ կ'ենթադրէ յարգանք մը այդ գործի նրելոյթին հանդէպ, բառը առնելով իր կըրկնակ իմաստովը:

Անոնց համար ուրեմն՝ որոնք կ'ուզեն ուսումնասիրել ու խնդրոյ առարկայ դարձնել Որբունիի տիրապետութեան պակասը իր նախադասութեան հոսքին վրայ, տրամադրելի ահագին նիւթ կայ արդէն իսկ հրատարակուած գործերով: Ինչպէս «Մահազգ»ի պարագային՝ տարբերակը որ կը տրուի հոս, սրբագրուած տարբերակ մըն է: Բայց հոս, ինչպէս պիտի ըլլայ նաեւ «Տիգրան»ի պարագային, մեր սրբագրութիւնները վաւերացուած չեն Որբունի

նիին կողմէ: Մեր պատասխանատուութեամբ է որ կր կատարենք զանոնք, եւ այդ պատճառով այ՝ անհրաժեշտ նկատեցինք ներկայ ծանօթութիւնը: Այնպէս կը թուի մեզի՝ որ այդ իրաւասութիւնը ունինք, եւ ունինք Որբունիի վստահութեամբ իսկ: Բայց ունինք զայն մանաւանդ ամիսներու, թերեւս տարիներու այն ուշխատանքով՝ որ կատարած ենք Որբունիին հետ, «Ասփայթը» վէպին ամէն մէկ նախադասութիւնը իրեն հետ ժամերով մաղէ անցուցած ըլլալով, այդ վէպին Ֆրանսերէն թարգմանութեան առիթով: Կր վերադառնանք որ մը այդ հարցին՝ թէ ինչպէ՛ս պէտք է մեկնաբանել վերը յիշուած «սիրապետութեան պահասը», եւ ինչպէ՛ս պէտք է հասկնալ այդ տեղ մը ահաւոր իրողութիւնը՝ որ հայ վէպի մը բուն բնատիպը կրնայ իր Ֆրանսերէն թարգմանութիւնը ըլլալ: Բուն բնատիպը, այն իմաստով՝ որ վաւերացուած տարբերակն է: Կը կարծենք որ հոս հրատարակուած էջերու պարագան շատ տարբեր է, գրութեան հետ իր ենթադրած յարաբերութեամբը, եւ նոյնիսկ եթէ վաւերացումի կարելիութիւնը չկայ այլեւս: Բայց կը կարծենք մանաւանդ որ հրատարակիչի մեր պարտականութիւնը կատարեցինք:

Մեր սրբազրութիւնները եղան, որքան որ կարելի էր՝ հպանցիկ. կէտադրումի, բառերու կարգի եւ շարահիւսութեան վերաբերող բարեկարգումներ: Մէկ տեղ միայն, վերջաւորութենէն երկու էջ առաջ, ամբողջովին անհասկնալի նախադասութիւն մը ստիպուեցանք վերակազմել: Այդ կէտը նշեցինք աստղով մը: Անկարելի էր կատարուած սրբազրութիւնները, յաճախ՝ չնչին, ցոյց տալ ծանօթութիւններով: Եթէ ատոր պէտքը զգացուի որ մը՝ ատոր պարտականութիւնը կ'իյնայ մեր յաջորդներու ուսերուն:

Այս էջերը կը բաղկանան մէկ տեսարանէ միայն. պատմողը, որ այդ օրը իր կինը՝ Շուշանը հողին յանձնած է (թէ եւ սկիզբը՝ մէկ տողով կը խօսուի իրենց ամուսնալուծումին մասին), այցելութեան կ'երթայ Վարոսեաններուն ու գիշերը տուն կը վերադառնայ: Պատմողը նկարիչ է, ու իր հետը բերած է ըստ երեւոյթին Վարոսեաններու տղուն՝ Մանուկին նկարը: Այս մանրամասնութիւնները կու տանք որովհետեւ Որբունի սխալ մը ըրած է այս տողերուն մէջ: Սխալը հետեւեալն է, Որբունի պատմող նկարիչին անունը դրած է Արմէն (մէկ անգամ՝ Վարոսեաններու աղջիկը կը կոչէ գինք Արմենակ): Բայց Հայածուածներու նախորդ հատորներուն մէջ՝ Արմէնը Մինասին ու Շուշանին սպտիկ եղբայրն է: Նկարիչը որ «Սովորական օր մը»ի մէջ Շուշանին սիրահարն է՝ կը կոչուի Արամ

(տե՛ս այդ վէպին մէջ՝ էջ 87: Նկարիչ ըլլալը կը հաստատուի էջ 91): Պէտք է ենթադրել որ Արամը ամուսնացեր է Երագեաններու Շուշանին հետ, ու կորսնցուցեր է իր կինը: Սխալը հասկնալի է երկու անուններու մօտիկութեամբը թերեւս, ու նկատի առնելով նաեւ այն հանգամանքը՝ որ «Սովորական օր մը» կը գրուէր 1968 կամ 1969ին (անկէ էջ մը լոյս տեսած է Ահեկան պարբերականին մէջ, Պէյրութ, 1980ի 1-2 թիւին մէջ): Ատկէ յետոյ՝ տարիներ մնացած է Որբունի շարքին հինգերորդ հատորին վրայ, ուր այս դերակատարները չեն երեւիր բնաւ: Որբունիի բուն ստեղծագործական տարիները կը զետեղուին 1964ի եւ 1970ի միջեւ, տարիներ որոնց ընթացքին հինգ վէպ գրուած են, հաշուելով շարքէն դուրս գտնուող «Եւ եղեւ Մարդ»ը: 1977ին, այսինքն՝ «Սովորական օր մը»ի խմբագրութեանէն ութ տարի ետքը, Որբունի կրնայ չփոթած ըլլալ անունները: Բոլոր այս պատճառները պիտի արդարացնէին հոս եւս՝ սրբագրութիւն մը մեր կողմէ, Արմէնը փոխելով Արամի: Նախընտրեցինք չկատարել այս սրբագրութիւնը, ու ձգեցինք պատմող նկարիչին անունը՝ Արմէն: Բայց անհրաժեշտ նկատեցինք այս լուսաբանութիւնը:

Ի վերջոյ՝ տուն եկայ: Չեմ կրնար ըսել որ այս էր լաւագոյն լուծումը, բայց չէի կրնար անվերջօրէն մնալ Մանուկին քով, որքան ալ ան պրնդած ըլլար: «Տուն մի՛ երթար ասանկ օրով, մինակ մնալը աղէկ բան չէ», ըսաւ, եւ յետոյ՝ խորունկ շունչ մը քաշեց, կարծես ամբողջ աղիքները բերնէն դուրս թափելու ճիգով մը, ու աւելցուց. «ասանկ ալ պիտի վերջանար արդէն»: Ատկէ ետք՝ ա՛լ բերանը չբացաւ մինչեւ ամարտը ժամեր տեսած այցելութեանս: Իրիկուն մը ատուտին մէջ խրած նաւու մը պէս՝ ինկեր էինք Մանուկին հետ, մեր յարաբերութիւններուն նոսրանալէն առաջ, ծառուղիին վրայի այդ սրճարանը: Մանուկը չէր սիրեր Հայերու յաճախած սրճարանը, քիչ մը անդին, կայարան տանող խոշոր սանդուխին վարի կողմը, լայնատարած կասկեմիներու ողիին վրայ, միշտ հայ յաճախորդներու բարձրադաղակ ճաշերով թնդացող: Հոս լաւ էր, իրապէս լաւ, ո՛չ մէկը կը խանգարէր մեր երկար խօսակցութիւնները, նոյնիսկ ամառը՝ երբ ծովախորշէն հաճելի հով մը կը փչէր՝ մենք ներսէն դուրս չէինք գար պատըզամին վրայ քիչ մը զովանալու: Իրականին մէջ՝ մեր յարաբերութիւնները շատոնց խզուած էինք, բայց երբ իրարու կը հանդիպէինք փողոցը, կամ Հայերու յաճախած սրճարաններէն մէկուն մէջ, երբեք չէինք ըզզացներ թէ ինքնաբերաբար ժամանակի ընթացքին՝ խզում մը տեղի ունեցեր էր մեր բարեկամութեան մէջ, եւ թէ այդ խզումը ամբողջական էր, գլխով ոտքով անհետացած Շուշանին հետ ամուսնութենէս ետք: Անշուշտ ո՛չ՝ դանակի մէկ հարուածով, գառնուկ մորթելու պէս: Ի՞նչ, հոգիին մէջ գիշեր ցեցեկ սնուցուած զգացումները հազար ձեւով խառնշտկուելէ՛ վերջ՝ անանկ մէկ անգամէն կ'անհետանա՞ն. երբեմն բնա՛ւ չեն անհետանար, եղած տեղերնին կը կենան, ու ինքզինքնին ուտելու տեղ՝ քեզ կ'ուտեն: Շուշանը անանկ հաւու միս չէր, որ նստիս համով հոտով ուտես: Սկիզբը՝ երեսկայսութիւն մըն էր. այսինքն՝ իր երեսը կախ էր շարունակ, գլուխը չէր կրնար վերցնել որ դէմքը տեսնէիր: Դէմքը կարծես ուռած էր, մինչդեռ հիմա՛ չոփ չոր է, կը հասկնա՛ս թէ ի՞նչ է ինքզինք ուտելը: Զիս տեսնելուն պէս՝ գլուխը կը դարձնէր ինձմէ, չտեսածի կու գար, բայց դէմքին ու վզին պնդութենէն գուշակելի էր չտեսնելու իր տառապակոծ ճիգը: Կամաց

կամաց է որ քինախնդութիւնը երեսկախութիւն դարձաւ, մինչեւ խաւարու-  
մը, մտքին մեկնումը, այսինքն՝ մոռացումը: Վերջերս՝ նախկին բարեկամ մը  
զարմանքով պատմեց ինձի՝ «այս ի՞նչ է եղեր Մանուկին, առջի օր հան-  
դիպեցայ, երկար ատենէ ի վեր տեսնուած չէիք, ի՞նչ ընես, տասը տարին  
անցաւ, հիմա երկրացի եղանք, սաղին անդին պիտի վազես ամբողջ օրը,  
շատ դուրս ալ ելած չունիք, անանկ ջութակի եւ դաշնակի ալ գացած չու-  
նիք, ի՞նչ եղաւ սա մեր անուշիկ Շուշանը, ամէն բան մոռցանք, զիրար  
ալ մոռցանք, հա՛ ի՞նչ պիտի ըսէի, երբ անունդ տուի՝ դէմքը պոստեց, տակն  
ու վրայ ըրաւ, յիշողութիւնը պրկելու ձեւեր առաւ եւ յանկարծ հարցոց՝ ո՞վ  
է ատիկա, ես ատանկ մէկը չեմ ճանչնար: Անկեղծ կ'ըսեմ, անանկ պարզ  
ձեւականութիւն մը չէր, համոզուած էր որ այդ անունով մէկը չէր ճանչնար,  
մինչեւ որ մէկէն՝ ցնցումով մը տեղէն ցատկեց, հա՛ ըրաւ, մեր նկարի՛չը»:

Կ'ըսէի արդէն որ Մանուկ ծածկուտան է, ամէն ըսածին՝ միտքը ծած-  
կելու փորձ մը կ'ընէ, կամ զոնէ՛ ըսածին կէտը, բայց ինձի հաւատացող  
կա՛ր: Զեմ գիտեր՝ ուրկէ՛ կու գայ որ ամէն մարդ այդ տղուն համար ան-  
սահման ներողամտութիւն մը ունի: Սաշթաբեցա՛ւ, անպայման պա-  
տասխանատու մը կը փնտռէր. երբեք, բայց երբե՛ք՝ մէկու մը միտքէն իսկ  
չէր անցներ, որ ան, ա՛ն իսկ էր սաշթաբումին պատճառը, որովհետեւ  
ծածկուտան է, երբ կը փորձէ բան մը ծածկել՝ կը ձախողի ու կը սաշթաքի:  
«Ռոն ինքն կ'ապացուցանես, կ'ըսէր Շուշան, ապացոյց որ ծածկուտան չէ,  
բանի որ կը ձախողի: Կը նշանակէ որ այդ գիղդին մէջ անվարժ է, խակ է, իր  
նկարագրին գիծը չէ ծածկուտանութիւնը»: Ինչ ալ ըսեմ այդ տղուն մասին,  
կարեւորութիւն տուող չկայ, ամենէն առաջ՝ Շուշանը: Այլեւ «չկար» պէտք  
է ըսել Շուշանի պարագային, որ զարմանալի տկարութիւն մը ունէր այդ  
տղուն հանդէպ: Անպայման, ի զին ամէն բանի՛ պիտի պաշտպանէր գինքը,  
անոր համար՝ որ ան որոշ հակում մը, համակրանք մը, ըսենք բառը՝ պաշ-  
տամունք մը ունէր իրեն հանդէպ, բայց ո՛չ իմ սիրոյս պէս՝ տխուր, չար-  
չարուած, այլ՝ զուարթ, ուրախ, մեծապէս զոհ իր հաշտոյն: Այս տեսակ ա-  
ռիթներով է որ դասակարգային բնագոյր կը յայտնուէր Շուշանին մօտ,  
ընտրութիւն մը, խտրութիւն մը կը յառաջացներ նախկին մեծահարուստի  
տղուն, Մուշի գիղացիին եւ Պոլսոյ բանաստեղծին միջեւ: Ի հարկէ՛ այս-  
պէս պաղարիւնով, գրուածին պէս չէ՛ որ տեղի կ'ունենար բախիւնը: Կա-  
տարեալ պատռտուք մը կ'անցնէր մէկէն միւսը, պոռալով, լալով, Շու-  
շան կը թոփահարէր ոտքերը, կը գոռգոռար. «բայց ի՞նչ տեսակ տղայ ես  
դուն, ամենամեծ բարեկամդ էր, ամէն օր միասին էիք, միայն կերածնի՞դ  
զատ տեղ կ'երթար, եւ հիմա ինձի՛ կ'ամբաստանես»: Ամիթեանները,  
Վարոսեանները, Նրազեանները մեծահարուստի համբաւով իրարու կապ-  
ւած էին, թէեւ չէին կրնար ծածկել ներքին խժժմանքները՝ հակառակ իրենց  
արտաքին սիրալիրութեան: Մեծահարուստի համբաւին պատճառով՝ Շու-

շան որբութիւն մը դարձած էր ինծի հետ իր ամուսնութեամբը, եւ իր ամուսնալուծութեան բուն գաղտնիքը հոնկէ կու գար, ինչպէս նաեւ այլազան ամբաստանութիւններ: Եթէ պատահէր որ ձեռքը կողոպտուի տուպրակին մէջ բռնած ըլլալու պէս՝ մարտնչէի Ծուշանին դէմ, ըսելով որ այդ մականբոյծին պաշտպանութիւնը շփոթ ու պղտոր բաներ կը պարունակէր, Ծուշան անմիջապէս կը փրփրէր, ոտքերը նորէն կը թոփահարէր, «ի՞նչ ունիս դուն այդ տղուն հետ, քեզի բան մը ըրած ունի՞», կատողէր եւ անոր դէմ: Այո, ի՞նչ ունէի անոր դէմ: Նկարին պատմութիւնը չէր ամէն պարագայի: Ես ալ եթէ իրեն տեղը ըլլայի՝ հարկաւ պիտի մերժէի: «Կը ներես, Արմէն» ըսաւ, երբ դիմանկարը աչքերուն առջեւ դրի, կը ներես, այս նկարը սենեակիս պատէն չեմ կրնար կախել, իսկ ի՞նչ բանի պիտի ծառայէ եթէ սնտուկի մը տակը պիտի դրոյ: Չէ՛, կը ներես, խորապէս զգացուած եմ այս մերժումէս: Հասկցիր ինծի, մայրիկս իր վերջին աղամանդէ մատանին տրամադրած էր ատոր համար, հաւանաբար ինձմէ յիշատակ մը պահելու համար իմ մօտադուտ մահէս վերջ: Գիտես թէ այս հիւանդութիւնովս երկար ապրելու յոյս չկայ: Ա՛խ, ինչպէ՛ս ըսեմ որ ներես: Սիրտս կտոր կտոր եղած է, չէ՛, չեմ կրնար մայրիկիս այդքան զոհողութիւն պատճառել անոր յիշատակ ձգելով այդ «մականբոյծը», բայց նայէ՛, ատոր համար չէ որ կը մերժեմ: Երբ նկարին ետեւը գրած բառդ աչքիս զարկաւ, անմիջապէս կարծես ներքին խաւարներս լուսաորոտեցան եւ իրականութիւնը ինծի տրուեցաւ շառաչին ապտակի մը պէս: Հասկցի՛ր զիս, կ'աղաչեմ, Արմէն, գրեթէ երախտապարտ եմ քեզի այս պահուս, ի՞նչ կ'ըսեմ՝ գրեթէ՛, ո՛չ, ամբողջապէս պէտք էր ըսել, ինքզինքս ինծի ճանչցնելու քաջութեանդ համար: Զարմանալի, հիմա կը զգամ որ անահման բան մը տեղի ունեցաւ մեր բարեկամութեան մէջ, ինչպէ՛ս ըսեմ, անիմանալի եւ ամբողջական, լախ եւ վատի, լաւագոյնի եւ վատագոյնի ամբողջութիւն մը, ուր կարելի է ամէն բան ընել, առանց վիրաւորելու, առանց վիրաւորուելու, ընդհակառակը՝ այն խորունկ զգացումով՝ թէ աշխարհի վրայ ո՛չ ոքի տրուած է այդ մենաշնորհը»:

Երկուքով կանգնած էինք սենեակին մէջտեղը, ցած ու կլոր սեղանի մը մօտ, կարծես մահոգէնի փայտէ սեղան մը, որուն թուխ կարմիր գոյնը եւ լայն երակները մնացած են աչքերուս խորքին վրայ, բայց տեսակ մը քաղցր ջերմութեան մը տպաւորութեամբը քան թէ փափուկ տեսքովը: Սեղանին վրայ տարօրինակ գործիքներ կային, ապակիէ, քիմիաագէտներու փորձանակներուն նման, որոնցմէ եօքալիփօխս-ի զօրաւոր հոտ մը կու գար: Հեզութիւնս տեսնելով՝ Մանուկ թեւէ բռնեց ու տարաւ զիս սենեակին դրան մօտ գտնուող աթոռին, ու ինքն ալ ուրիշ աթոռ մը առնելով՝ եկաւ քովս նստաւ: Նախ քան նստիլը՝ դուռը քիչ մը բացաւ. «կը ներես, անլի չեմ կրնար բանալ, կը խեղդուիմ, նայէ՛ արդէն սկսայ հագալ:

Ներսը մարդ չկայ, կրճակը բարձրաձայն խօսի: Մայրս եւ բոլորս գործերնին ձգած՝ տեղ գացին: Այս իրիկուն ստիպուած՝ միևնույն ուղի ատեն պիտի աշխատին նորէն: Տակաւին չտրվեցան, թէ պետք է հրաժարինք հին սովորութիւններէն, երբ աշխատատեղ մարդ դարձած ենք: Այսօր Տիկին Ամիրեանին օրն է: Գիտե՛ս, Աշխէնին մայրը, Աշխէնը որ երբեմն կու գար Շուշանի նուագի երեկոյթներուն: Երկար ատեն է՝ չենք տեսած, այն օրէն ի վեր՝ որ Շուշանը դադրեցուց իր երեկոյթները: Զարմանալի աղջիկ մը չե՛ս գտներ Աշխէնը, տեսակ մը վեհութիւն կայ վրան: Կու գար կ'երթար առանց անգամ մը բերանը բանալու, հեռակեաց, անհատորդ, բայց այնքա՛ն մօտ, երբ երկար նայիս իրեն՝ կարծես կը մօտենայ, կը զգաս թէ անա՛ ձեռքը բու ձեռքիդ մէջ պիտի իյնայ: Արդէն ինկած է, ձեռքը բու ձեռքիդ մէջ է, ի՛նչ տարօրինակ բան է, ձեռքդ կը բանա՛ մէջը բան մը չկայ: Նոյնիսկ՝ ձեռք չկայ: Ինչպէ՛ս կրնայ ըլլայ: Գլուխդ կը վերցնես, կը նայիս, ան միշտ իր տեղն է, Շուշանին ետեը, աչքերը շարած Շուշանին նուագած կտորին: Զես գիտեր, թէ ուրկէ՛ կու գայ այդ դիպական քաշողութիւնը ու կարողութիւնը, եւ թէ ինչպէս կրնան այդ երկուքը կենակցիլ:

Նորէն կանգ առաւ, ինքն իր մէջ քաշուեցաւ, փակուեցաւ: Ինձի այնպէս կը թո՛ի՝ լուրջեան այդ պահերուն է որ կը մարսէ իր ըսածները, որոնք միշտ առաջին անգամ ըլլալով մտածուած են իր կողմէ: Երբե՛ք, ո՛չ մէկ անգամ՝ չէ լսուած իր բերէն. «ինչպէս ըսած եմ անգամ մը...», «գիտե՛ս, արդէն քեզի անգամ մը ըսած եմ» ի պէս բաներ: Ամէն անգամ՝ նոր ծնունդ մըն են իր մտածումները, յանպատրաստից, եւ զանոնք կշռելու, քննելու, որոճալու եւ մարսելու հարկադրանքին տակ կը գտնուի անմիջապէս. Բայց ի՞նչքին վրայ՝ ո՛չ մէկ ստուերի մը սահանքը, նուագագոյն շարժումով մը. արձանի մը դէմքն էր: Այդ արտասովոր բացակայութիւնները վիրաւորիչ պիտի ըլլային որեւէ մէկէ մը եկած, ու վիրաւորանքը Մանուկին համար ամենէն անմարդկային բանն էր, որ մարդ ուրիշ մարդու մը կրնայ զգացնել: Վստահ եմ՝ այս անգամ զիս վիրաւորած ըլլալու զգայութիւնն է, որ փակել տուաւ դէմքը. եւ ինք քաշուեցաւ անոր ետեը, չափելու համար պատճառած ցաւին տարողութիւնը: Արդէն զգալի էր իր անդրադարձը, երբ ըսաւ՝ «այն օրէն ի վեր՝ Շուշան դադրեցուց իր երեկոյթները»: Նախադասութիւնը հազիւ վերջացուցած՝ արդէն իսկ վարագոյրիկ ետեւն էր: Անկէ ետքը եկող նախադասութիւնները բոլորովին անտեղի էին, իրենց ուժը կորսնցուցած, գրգռուած ու ողորմելի, իրեն կը ծառայէին իբրեւ ծամոց. սիպէ ձուկին նման, որուն ինքնապաշտպանութեան միակ զենքն է՝ բոլորտիքները արտաբերած մելանը, զոր կը ծայթթեցնէ բամբիներէն հալածուած ամպերու պէս: Անելի տեսանելի եւ լսելի մէկ ձեռք այդ ծամկոյթին՝ անշուշտ հազն էր: Շուշանի երեկոյթներու դադրումին նախադասութիւնը լմնցնելուն պէս՝ սկսաւ հազալ ամբողջ աղիքներով ու թեր-

թելով կոկորդը, ցնցելով ու տարողնելով իր այնքան ճկուն ու առածա-  
կան մարմինը, ու յանկարծ՝ կարծէք թէ երբեք ցնցուած շլլար ծառէն թուփ  
թափելու պէս՝ պոտոտալական անշարժութեան մը մէջ մտտ, այո, այո՝  
կարճ «ճերդոթին»-է մը վերջ։ Այդ «բացակայութեան» ընթացքին է որ  
սուաջին անգամ ըլլալով, հակառակ մեր տասը տարուան բարեկամու-  
թեան, տարուեցայ պահ մը բարեկամս ուսումնասիրելու։ Առաջին անգամ՝  
գաղթի առաջին օրերէն իսկ։ Ուրիշ ի՞նչ կրնայի ընել, սպասելով իր վե-  
րադարձին։ Աչքերս պտտցնել վերջ սենեակին շորս կողմերը, յանկարծ  
նայուածքս եկա հանգչեցաւ անոր վրայ։ Անշուշտ ամենէն զարմանալին  
այդ սենեակին մէջ՝ դիմացի միակ պատուհանն էր, կոյր պատուհանը,  
փեղկերը բաշտած, վարագոյրը՝ ինկած ծանրօրէն, եւ շրջանակին ա-  
րանցքները՝ ծեփուած թողթով ու սօսինձով, այնպէս որ դատա-  
պարտուած էր մշտապէս զոց մնալու։ Մանուկ շնչահեղձութենէ կը տա-  
ռապէր, բայց իրեններուն գլխաւոր մտավայտութիւնը թոքախտն էր։  
Թոքախտը դեռ շնչահեղձութենէն շատ առաջ սկսած էր, տարագրութեան  
եւ շետոյ՝ որբանոցի օրերուն։ Ինչպէ՛ս այս երկու հիւանդութիւնները կըր-  
նային իրարու հետ միասնութիւն մը կազմել, երբ ամէն ինչ հակասական  
է անոնց միջեւ. թոքախտին մաքուր, լեռնային օդ պէտք է, մինչդէռ  
շնչահեղձը կը խեղդոյի օդէն, իսկ սա շիշերէն ծնած խոնաւութիւնը այն-  
քան վնասակար է թոքերուն։ Երբ մէկը խնամես՝ միսին կը վնասես, եթէ  
խնամես անշուշտ։ Բաւական ատեն է՝ այդ մտածումը կը յաճախէ գիս։ Երբ  
կը նայիմ սա սենեակին, ան աւելի կը հիմնատրուի։ Ինչպէ՛ս կարելի է այս-  
քան գիրքեր տեղադրել մտքին մէջ, գրականութիւն, բանաստեղծու-  
թիւն, զեղագիտութիւն, ամէն բան՝ ամէն բան հետաքրքրական է այդ  
մարդը ըլլալու համար, ամենէն նորր, ամենէն զգայուն զգացողու-  
թեամբ, եւ տեսակ մը *տանտի* միանգամայն, թեթեւ բայց ոչ փարսպ,  
լեցուն ընդհակառակը իրիկուան սիւքին պէս, որ շնչած է ամբողջ բեռը։  
Միակն է ան, որ փոքրիկ յօդուածին մէջ՝ վերջնական բաներ ըսաւ, վերջ-  
նական բաներ իմ նկարչութեանս վրայ, նկատի առնելով իսկ տեղական  
թերթերուն գրածները։ Իմ կարծիքս այն է՝ որ Մանուկ արուեստականօրէն  
ծնեցուց ու խնամեց իր հիւանդութիւնները, որպէսզի կարենայ այսքան  
բան ամբարել, եւ ըստ այն հպարտութեան՝ զոր ինքը եւ իրենները կը  
սնուցանեն՝ անոնց մեծ մարդը ըլլալ, որուն համար մայր եւ քոյր գիշե-  
րը ցեցեկին պիտի խառնէին աշխատանքով, իրեն հայթայթելով բոլոր  
միջոցները ու իրեն հանդէպ սերը պաշտամունքի տանելով։ Նկարին վրայ  
աշխատած շրջանիս՝ չեմ կրնար ըսել, թէ ինչպէ՛ս կազմուեցաւ համո-  
զումս, կարծեմ՝ թոյնի մը պէս, որ կարծեցաւ ուղեղիս մէջ, անզգալաբար,  
օրը օրին, օր ըստ օրէ, ու յանկարծ այնպիսի համեմատութիւններ առաւ,  
որ կարծես թէ ես ինքս անէացած էի, այլեւս խաղացանկին մէջ չէի, աշ-  
խարհէն դուրս շարտուած էի, եւ սակայն՝ կատարեալ մոլուցքով մըն է,

որ շարունակեցի նկարել անդադար, ու այսօր է որ այստե՛սանդերձ՝ երբ կը պատրաստուի դուրս ելլելու հոս գալու համար, նկարը՝ թեիս տակ, գրուխիս մէջ ձայն մը պողաց՝ մակարոյծը: Չեմ կրնար ըսել, որ այդ բառը պախարակելի բան մը ունէր, ինչպէս չունէր ամբողջ աշխատանքի շրջանիս եւ երբ յանպատրաստից մտքիս հորիզոնին վրայ իջաւ առանց իմ կարծիքս հարցնելու, եւ նոյնիսկ հպարտութիւն մը զգացի, որովհետեւ անուն մըն էր, որ կ'եզրակացնէր տարիներու ինքնաստեղծումի գործը:

Կարծես նայուածքս սօսինձով փակցուած էր, ինչ ճիգ ալ թափէի՝ անկարելի էր որ զայն իրմէ հեռացնէի: Նախ իր հասակն էր, այնքան բարեկամ էր, նորք, բայց ո՛չ նիհար, մկանուտ նոյնիսկ, չես գիտեր ինչպէ՛ս, երբ նկատի առնենք իր հիւանդ մարդու պարագան, եւ նկունութիւն մը նաեւ, թերեւս բնական, որ սակայն կը թուէր ուսումնասիրուած, կատարելագործուած, այնպէս մը՝ որ կիները ետ կը դառնային ճամբուն վրայ, անգամ մըն ալ ըմբռնուելու համար իր մեծ վաշտչութիւնը: Իր հասակը կը թողարարէր որ ամենուն վերէն հայի: Աչքերով՝ որոնք մասնատր առաւելութիւն մը չունէին, բացի նայուածքի անուշութենէն, խառնուած այտերուն զուսպ բայց տեսականօրէն ընդլայնող ժպիտին, հակասութիւն մը եւս, որ զինքը կ'ընէր այնքան մարդամօտ եւ միաժամանակ՝ այնքան հեռակէաց, գուրգուրալիք եւ հոգածու: Ս.մէն տեսնելուն՝ անպայման պիտի հարցնէր՝ «Արմէն, ինչպէ՛ս ես, սիրելիս, քէֆդ միշտ տե՛ղն է»: Բաւերը չէին այնքան իր հոգածութեան իմաստը տուողը, որքան՝ ձայնը, որ կը սպասէր սիրտը, կը մաշէցնէր զայն կարծես: Ամբողջ մարմնով անշարժ էր, իսկ դէմքը՝ գրեթէ թափանցիկ, թմրուկի քաշուած մորթին պէս ձիգ, նայուածքը՝ կորսուած ներքին տարածութեան վրայ, թէեւ աչքերը բաց էին, բայց կոյր մարմարէ արձանի մը աչքերուն նման: Անարգել կը նայէի, մտածումներուս մէջ մխրճուած. երբ կամաց մը, առանց շարժելու ո՛չ իսկ հիպէ մը իր մարմնէն ու իր դէմքէն՝ «այդպէս մի՛ նայիր ինձի», մռնուց, «կարծես թէ առաջին անգամն է որ կը տեսնես»: Ու շարունակեց, դեռ վերջակէտը չդրած: Զարմանալի տպատրութիւն մը ձգեց վրաս վերջակէտի սղումը: Ինձի այնպէս թունցաւ՝ թէ վերջակէտը հագիւ դրած՝ ետ առաւ զայն, ա՛լ չդրաւ իր տեղը, այնպէս որ անհուն հեռատրութիւն մը կար լրացած նախադասութեան եւ նորին միջեւ, թէեւ՝ շունչ մը անգամ, նոյնիսկ շատ կարճ, չէր քաշած, երբ երկու նախադասութիւնները իրարու շղթայեց, իբր թէ նոյն շէշտով շարունակելու մտահոգութեանը, ու հակառակ հեղինակին ճարպիկութեան՝ շարունակութիւնը կրցաւ իր ինքնութիւնը պահել: Ներսը՝ հեզոտ, դուրսը՝ հանգիստ, տակուն շեշտով այդ փոքրիկ նախադասութենէն անմիջապէս վերջը վերջակէտին բերած անհանգստութիւնը ձայնի շեշտին՝ այնպիսի երանգ մը շնորհեց՝ որուն կարելի է հանդիպիլ միայն անոնց մօտ՝ որոնք երկար ատեն իրենց

ոճիրը ուրանալէ ետք, յանկարծ՝ աչկես անորանալի փաստերուն առջեւ, կամ ալ աչկես զգուած ստելէ, կը կրին իրենց խոնարհ խոստովանութիւնը ընելու համար:

Վերջակէտը չդրած՝ շարունակեց, կամ վերջակէտը չդրաւ որպէսզի շարունակէ, ասոնք ըսելու ձեւեր են: Իրականութիւնը տարբեր է, բաւական ժամանակ անցաւ մինչեւ որ ձայնը կրկին յայտնուեցաւ, բայց ինձի այնպէս թուեցաւ՝ թէ կը տեսէր առանց երբեք դադրած ըլլալու, ինչպէս երբ արքայական նիստի մը՝ փառապանը ձեռքի ճոկանը ուժով մը գետին կը գարնէ, յայտարարելով՝ «Արքան», եւ ժողովականները կամ հանդիսականները ոտքի կ'ելլեն այնպէս՝ ինչպէս թէ արքան արդէն իսկ սրահ մտած ըլլար, մինչդէռ երկար վայրկեաններ պիտի անցնին մինչեւ անոր հանդիսատու մուտքը. բայց յայտնուած էր ան արդէն, տեսնուած էր փառապանին ձայնին մէջ, սրահի հանդիսականներուն համար, որոնց նայուածքները սարսուռով սեւեռած էին բեմի խորքին գտնուող դրան վրայ: Հանդիսականներուն համար՝ հոն էր Ան, ամբողջ զգայացունց գոյութեամբը արտասովոր բանի մը, տեսակ մը խորհրդաորութեամբ թրծուած սքանչելի կամ սարսափազդու գալիքի մը, որ երբ վերջապէս՝ իր մուտքը կը գործէ, սպասուած սփոփանքէն աւելի՝ յուսալարութիւն կը պատճառէ, բանի որ հանդիսականները իրենց պէս հասարակ անձի մը առջեւ կը գտնուին:

Ինձի համար ալ՝ նման բան մը պատահեցաւ: Երբ սկսաւ խօսիլ, վրաս յուսահատութիւն եկաւ: Անհամբերութեամբ սպասած էի իր խօսքը՝ ու երբ բերանը պիտի բանար խօսելու համար՝ ամբողջ հոգիովս հիացական ուշադրութիւն մը ցոյց կու տայի, բայց այդ զգացումը իմ մէջս չէի գտներ: Արդեօք բերանի ձեւին շեղումն էր, ինչպէս երբ նուագի մը մէջ՝ ոթնեակ մը վար կ'իյնայ թոնը, նուագին ամբողջ նշանակութիւնը տակն ու վրայ ընելով, եւ մեր միտքը հոս հոն կը վազէ անոր ճշգրիտ իմաստը գտնելու մտադրութեամբ ու յանկարծ թեւաթափ կ'ըլլայ հաստատելով որ ըսպասուած բարձր մտածումները պարզապէս ինքնաձայնութիւն փորձ մըն էին: Արդարեւ՝ փորձ մըն էր իրականութեան մէջ կատարուածն ալ, թատերական լեզուի իմաստով, որովհետեւ չուրիւնը, որուն եւ մտիկ կ'ընէի իր դէմքին վրայէն բուն բնագրին հետեւելով, տեղի տուաւ, եւ անմիջապէս՝ սկսաւ բարձրաձայն կրկնել իրապէս թատերական փորձի մը եղանակատրուածը: Սկիզբը ինչպէս միշտ՝ կը խօսէր նկարի մը, գրութեան մը կամ մէկու մը մասին, ու գրաւեց հետաքրքրութիւնս իր չափաւոր եւ սակայն նրբին դիտողութիւններովը, երբ ստուերի նմանող բան մը մտաւ ձայնին մէջ եւ ուղղակի սարսափի մասնեց զիս: «Իրաւունք ունիս, Արմէն», ըսաւ առանց տեղէն շարժելու նոյնիսկ առանց գլխու ազտիկ շեղում մը դէպի ինձ, բայց եւ այնպէս ձայնիք: Անոր ուղղութիւն մը տալով, այսինքն՝

ձայնը իմ կողմս ուղղելով, «ամբողջապես համաձայն եմ քեզի հետ, ես այնչեպ հարցումը տուի ինքզինքնիս նկարող մերծելու անմիջապես ետքը, այն յուսավառութեան տակ՝ որ փայլատակեցաւ մտքիս մէջ, երբ տեսայ դիմանկարս: Ո՛չ թէ նկարը, որ չեմ գիտեր ինչպէ՛ս լաւատեսութեամբ թէ յոռետեսութեամբ, իշխանականօրէն գեղեցիկ էր, այլ վրձինի այն հարւածը՝ զոր տուեր էիր վերջին պահուն - ներկը դեռ թաց էր -, հա՛ւ այդ մաս մը ներկը, դեղինի եւ կանաչի խառնուրդ, նետուած ձախ երեսին վրայ, այո՛՛ նետուած եւ ոչ թէ վրձինուած, ա՛ն է որ անմիջական եւ վճռական նշանակութիւն մը տուած է նկարին, երեսի՛ քու իսկ ձեռքովդ շարտուած հոգիի մէկ վճռական պահուն, ինչպէս կ'ըլլայ ներշնչումը՝ բղխումի նման, անկախաբար քու կամքէդ, ու խելացի ռազմավարութեամբ մը՝ նայուածքիս տակ դրուած»:

Առաջին անգամ ըլլալով՝ այդ առեւն է որ նկատի առի յանկարծական խզումը խօսակիցին հետ: Անարգական ոչինչ ունէր, ինչպէս կը խորճէի այդ օրը, ուր քիչ մնաց՝ պիտի մեկնէի, այդ տանը մէջ այլեւս բնաւ ուրք չդնելու որոշումով: Առիթով մը՝ զուարթաբանութեամբ կատակի առեր էի Մանուկի այդ յանկարծակի բացակայութիւնները, զաղափարը յայտնելով թէ կ'երեսի Մանուկ մասնաւոր կ'ընէ մահ խաղալով հետերնիս, մեզ գնիցնելու համար: «Չէ՛» պոռաց Տիկին Վարսեան, Տիկին Հռիփսիմէ Վարսեան, Մանուկին մայրը, պատառաքաղը ձեռքէն գետին ձգելով, այնքան մարելու չափ խնդալէ բռնուած էր: «Չէ՛, չէ՛», աղաղակեց ափովը քերանը գոցելով, այն վախովը՝ որ կերակուրի փշրանքները կրնային ոմբակոծել երեսներս, «դո՛ւր այ խաբուեր էք: Ա՛հ, տեսնելիք բան էր, Աստուած իմ, սկիզբները՝ ահ ու սարսափ բռնուած էինք, շունչերնիս կը խեղդէինք կոկորդոսու մէջ»: «Այնպէս չէ՛, Անահիտ», ըսաւ խօսքը ուղղելով աղջկանը, որ արդն խաղին մէջ մտած էր քահ քահ խնդալով, երկու ձեռքերով մէջքը բռնած նախ, ու անկէ վերջ՝ երկու բունցքները կտրծքին վրայ սեղմած, աչքերը դէպի երկինք վերցուցած, եւ այդպէսով՝ աղօթող սրբունիի մը կերպարանքը առած, ու վերջապէս՝ խաղաղած, գիշելով աչքերը վար իջեցնել երկինքէն, իբրեւ նշան՝ մօրը տրուած հաւանութեան, երբ դեռ ասիկա կը շարունակէր իրենց ողիսականը պատմել: «Ատենը մէջ մը՝ կը թնրէր, ասեղ խօթէի» չէր գօսը, Ֆաքիթի պէս: Յարմարին է եղեր, տոքթօնը ըսաւ, ու քիչ մը հանգստացանք: Մինչ այդ՝ կը կարծէինք որ հոգեվարքի մէջ է: Տեսնելիք բան էր մեր վիճակը, աղջիկս չդիմամալով՝ քովի սենեակը կ'երթար լալու համար, իսկ ես հոս՝ արցունքներս կը կլլէի: Տոքթօնը ըսաւ որ ընդհակառակը՝ ատիկա լալ բան է եղեր ուժերու վերակազմութեան համար»: Ծաշը վերջացած էր:

Վարսեանները յաճախ ճաշի կը հրափրէին զիս: «Եկո՛ւր, տղաս»

կ'ըսէր Տիկին Հռիփսիմէն, «հաշկական կերակուրներու կարօտը ունենալու ես, մայրիկը կը յիշես»: Իրաւ որ ալ շատ քիչ անգամ մը մերժէի, արդէն Մանուկին հետ անբաժան ընկերներ էինք, ըսողներ կային որ միայն մեր կերա՛ծը զատ տեղ կ'երթար: Նման էին մեր ճաշակները, սկսելով հանդերձանքէն: Լաւագոյն դերձակները կը յաճախէինք, վերջին նորաձեւութեան կը հետեւէինք, գոյներու ներդաշնակութիւնը նոյն մտահոգութիւնը կը ներշնչէր մեզի, հագուստին յարմարող կօշիկները, գուլպաները, վըզնոցը, գլխարկը, բայց մանաւանդ՝ փողկապի ընտրութիւնը յաճախ գլուխ գործոց գիտերու կը հասցնէինք: Կարծես այս բոլորը ըսելը աւելորդ չէ, հակառակ իմ հաճած համբաւիս: Անշուշտ փողոցները չէ որ լուրերը կը շրջագայէին: Տուներուն մէջ՝ կը փափսային, թէ ես չարամիտ եմ, որ կրօնքս չեմ պահեր: Ինչպէս այդ օրուան պարագային՝ միամտութիւնը ունէի իր հրաւերը ընդունելու, կարծելով որ մենաւոր հայրենակիցիին կ'ուղղուին Տիկին Վարդուհանի զգալական զեղումները, միեւնոյն անոնք կը ծածկէին ուրիշ նպատակ մը: Տիկին Վարդուհան փեսացու մը կը տեսներ իմ անձիս մէջ, իսկ Անահիտը՝ երկրորդ եղբայր մը, որ իր ամուսինը կրնար ըլլալ սակայն: Ինձմով կ'ուզէր փոխարինել պաշտամունքի առարկայ եղբայրը: Այդ ժամանակները՝ դեռ տարածաչնուած չէր Եւրոպայի հանդէպ ունեցած խեղութիւնս: Անգամ մը որ քիչ թէ շատ աղմուկը ականջէ ականջ անցաւ՝ կամաց կամաց հրաւերները պակսեցան, եւ յետոյ բոլորովին դադրեցան, գիւղական մշտահոս աղբիւրի մը նման, որ յանկարծ կը սկսի պակսեցնել ջրի իր առաքումը, ու օր մըն ալ՝ կը դադրի հոսելէ, որովհետեւ ակը ուրիշ ուղղութիւն մը, ուրիշ ճամբայ մը գտած է, ու ո՛չ թէ անպայման ցամքած է:

«Գիտես թէ», աւելցոց պահ մը լռութենէ ետք, լռութենէ մը՝ գիտակցաբար լարուած մէկու մը կողմէ, որ ամենամեծ վարպետութեամբ կը գործածէ նմանօրինակ երեւոյթները, որոնց մասին արդէն պիտի խօսուի, կամ աւելի ճիշդ՝ ինքն է որ պիտի խօսի: «Գիտես թէ չտեսա՛յ երկար բարակ ըրած մեքենայութիւններդ. նկարը ձեռքիդ մէջ դարձուցիր մէջ մը աջ, մէջ մը ձախ, բաւական տեսն մը, եւ յանկարծ նկարին կոնակը ինձի ուղղած՝ կեցար, օ՛հ, ո՛չ երկար ժամանակ, ակնբարթ մը միայն, երբ վըստահ էիր որ դարձդարձիկ նկարին վրայ ամբացած նայուածքս անմիջապէս պիտի կապտէր չիմական մեղանով ու հաստ գիրերով գրուած Մակարոյժ բառը: Ուզածիդ պէս ալ եղաւ, այնքա՛ն անպատելի անակնկալ մըն էր այդ յայտնութիւնը. անմիջապէս երբ բառը մէկ անգամէն եւ ամբողջութեամբ աչքերուս մէջ մխրճուեցաւ, ինչպէս ըսի, տեղը հասածին պէս տեսակ մը բացարձակ լուսաւորութիւն մը եղաւ, յստակատեսութեան պէս բան մը, կարծես մահամերձի մը պարագան ըլլար, որուն վերջին վայրկեանին իր աչքերուն առջեւ՝ իր ամբողջ կեանքը կը տողանցէ, սա տար-

բերութեամբ միայն՝ որ իմ այս պարագայիս՝ պատահածը չէ որ տողանցեց, այլ պատահածին կողմէ ծածկուածը: Կարելի է ըսել, ինչպէս մեր լեզուն կ'ըսէ՝ դուն իմ աչքերս բացիր: Հիմա գիտեմ, ու այդ բառին հասնելու համար՝ ի՛նչ խորհրդածութիւններ է անցած եմ: Քիչ առաջ՝ ես այլ այդ ճամբան առի, ամէն մէկ քայլը մանրակրկիտ կերպով ուսումնասիրելով: Հաւատա՛, յափշտակութեամբ կատարեցի այդ գործողութիւնը, եւ ո՛չ մէկ վայրկեան՝ տխրութիւն զգացի, ընդհակառակը՝ մեծ եղաւ ուրախութիւնս ինձի տուած նիւթդ քրքրած ատենս»:

Ուրեմն այս է եղեր Տիկին Վարսեանի ըսած «թմրութիւն»ը, փորելու, փորփրելու աշխատանք մը, գործուած իր իսկ հոգիին վրայ, ժամանակի ընթացքին մեր ապրումները եւ չապրումները ժողված այդ տոպրակին մէջ, որմէ Մանուկ սկսաւ պարպել ու չորս հովերուն ցրուել հոն կուտակուած վսեմն ու նսեմը:

« «Հատուն մարդը երեխային մէջ է» ըսելու ձեւ մը ունի մայրիկս» շարունակեց ընդհատուած խօսքը, «եւ կը պատմէ այսօրուան Մանուկը հասկնալու համար, թէ դեռ մէկ կամ երկու տարեկանիս՝ զարմանալի ռազմագիտութեան տէր եմ եղեր, որպէսզի մայրս սեղմէ զիս իր կուրծքին վրայ: Ամէն անգամ՝ երբ մայրիկիս ծիծերը սեղմելու պահանջ մը ունենամ՝ այնպէս խելօք, այնպէ՛ս խելացի ու անուշ կ'ըլլամ եղեր, որ մայրիկս ուրախութենէն խելքը կորսնցուցած՝ զիս կուրծքին վրայ կ'առնէ ու կը սեղմէ եղեր, զիս համբոյրներու մէջ ողողելով, ու ես օգտուելով անոր տկալութեան այդ պահէն, ձեռքերս կը մխրճեմ եղեր իր ծոցը, ու կը սկսիմ եղեր անոր ստիճքները իմ պզտիկ ձեռքերովս շաղուել մոլեգնօրէն, յաճախ նոյնիսկ՝ արիւնելու աստիճան: Բայց այնքա՛ն չափազանցեր եմ մխրագործութիւններս՝ որ մայրիկս սկսեր է պզտիկ հարուածներ տալ թաթիկներուս, եւ ինչքան հաճո՞յք կը պատճառէ եղեր, ծօ՛ խենդենայիք բան է, կ'ըսէ մայրիկս, որքան շատ ծեծէի այնքան շատ հաճոյք կ'առնէր: Այնպէս որ ինքն այլ ստիպուեր է արիւնտել թաթիկներս, որպէսզի կորսնցնեմ այդ վայրենի մոլութիւնս: Կը տեսնե՛ս, պզտիկ, պզտիկ, հէ՛, դուն կրնա՛ս հիմա ընել մօրդ հետ այդ շարանճի խաղերը, թէև փափաքը չի պակսիր քեզի: Խոստովանէ՛, խոստովանէ՛ որ ինձմէ տարբեր չես: Գիտե՛ս, թէ ե՛րբ կորսնցուցի այդ ունակութիւնս, այո՛, այն օրը՝ որ ճանչցայ Շուշանը: Ներողութիւն, ներողութիւն, Արմէն, չէ՛, մոռացութեամբ չէ որ կ'ըսեմ այս խօսքերս, պէտք է ճշմարտութիւնը ըսեմ, ու ճշմարտութիւնը միշտ այլ երբ մէկուն համար բարիք է՝ միայն համար ցաւ է: Ուրիշ հարց՝ թէ դուն այն ատեն դեռ տեսած չէիր Շուշանը: Եթէ չեմ սխալիր՝ Երազեաններուն արուարձաններէն իջնալէն քիչ մը առաջ էր, որ քեզ անոնց վիլլան տարի: Ա՛հ, այդ վիլլան կործանեց արդէն մեր բոլորին պէս՝ այդ ազնիւ ըն-

տանիքը, որ չիմարութիւնն ունեցաւ շարունակելու երկրին բարքերը: Խօսքը մէջերնիս, այդ շրջանին՝ գոնէ տան վարձքը Պարոն Գառնիկը կու տար: Տիկին Արուսեակը, Մինասին մայրը, Պարոն Գառնիկին գնաց եկաւ եւ մաս մը փրցուց անոր իրենց մնացած պարտքէն: Կ'ըսեն թէ պատերազմին սկիզբը երբ դեռ Տանկաստանը կոխի մէջ մտած չէր, անոր դռները գոցուելէն ճիշդ առաջ՝ Տիկին Երազեանին ամուսինը նստերով ապրանք հայթայթած է այս քաղաքին, այսինքն՝ Պարոն Գառնիկ Երազեանին, իր եղբօրը, որ այդ ապրանքը ոսկիի գնով ծախած ու սաստիկ հարստացած է: Ատկէ է որ բանի մը փշուր թափեց Տիկին Երազեանին ափը: Տիկին Երազեան քիչ մը հին օրերը վերապրեցաւ, եւ Շուշան ամէն իրիկուն դաշնակին առջեւը նստած կ'անցնէր, շրջապատուած ջութակահարներու եւ ուրիշ գործիքներ նուագողներու ջոկատով մը: Ասոնք անելի սիրաբանելով զբաղած էին, այո՛, այո՛, մի՛ վախճար բնելու, ես ալ մէջը, բայց ես նուազածու չէի, սիրաբանելով, այսինքն՝ Շուշանին ուտերէն մէկուն վրայ հակած՝ անոր ականջը անուշ բառեր լեցնելով: Չմոռնամ - պէտք չէ բան մը մոռնամ այն բոլոր բաներէն՝ որոնք ամբողջը միասին մանրակրկիտ քննարկումէ մը անցուցի, բայց դժուար է նույնութեամբ կրկնել ապրուած պահերը, որոնք կը կրկնուին առանց երբեք նույնը ըլլալու, եւ ասոր համար՝ պէտք ունիմ պաղարհինով վարուելու, շտաբնալու խօսած ատենս, որովհետեւ յանկարծ եփ կ'ելլէ արիւնը ու կը դառնայ տաղտկալի: Նայէ՛ ինչպէս մոռցայ, ըսի որ Շուշանին հանդիպելով՝ կորսնցուցած էի մօրս հետ ունեցած ու միշտ ի՛ գօրու եղող չարանճիութիւններս, բայց քիչ մը շուտ ցատկեցի փոսին վրայէն: Փոսին միս կողմը՝ քոյրս կար, մօրս եւ Շուշանին մէջտեղը: Այս մէջտեղը անելի կիրք ու գլխապտոյտ կը պարունակէր, բայց վերջապէս՝ եկաւ Շուշանը: Մեր առաջին կամ երկրորդ լեռնային պտոյտին էր, Երազեաններու խումբը արեւելեան կողմը քարքարոտ լեռները բարձրացած էին, եւ արեւը սաստիկ զօրաւոր էր: Շուշանը օրը վազվզելով անցուցած էր, երբ իրիկուան դէմ, յօգնած, ուժասպառ՝ կը շանար խումբին հասնիլ, վարէն վեր, կքելով ու ելլելով, ժայտերը իբրեւ գաւազան գործածելով (ձեռքերով անոնց կը կոթնէր), վիզը ցցած: Եւ այդ պահուն՝ ուր արեւը արեւմուտքի թատրոններու լուսարձակներուն ցմա՛ն՝ Շուշանը առած էր իր լուսեղէն խորձերուն մէջ, ան պարտուած՝ թեւերը բարձրացուց, յաղթուած Վէնիսին պէս որ կը յանձնուի իր թըշնամիին, եւ նետուեցաւ առաջին հանդիպածին վրայ, որ եւ էի: Գիտե՛ս թէ ի՛նչ եղայ ես երբ Շուշան թեւերուս մէջ ինկաւ: Յանկարծ աչքերուս լոյսը մարեցաւ, երբ անոնք հանդիպեցան Շուշանի լայնաբաց կործքին, ու մանկութեանս օրերուն պէս՝ ճանկոտելու, արհիւնելու տենչանք մը պողոթկաց արտիս մէջէն: Բայց ես այդ մանուկը չէի այլեւս, որ կարենայի իրականացնել ցանկութիւնս: Ամէն պարագայի՝ այդ պահէն սկսեալ՝ Շուշան եղաւ երեք կիներու ամփոփոյթը ինձի համար: Ա՛հ, պզտիկ, պզտիկ,

ի՛նչ աղէկ էր երբ պզտիկ էինք, կամաց կամաց մեր մայրերուն ծիծերը սեղմնանայով, շեղ աչքերով շի շի նայելով մեր քոյրերուն՝ կը մեծնայինք, մարդ կը դառնայինք, բայց թուրքը գլխատեց մեր մանկութիւնը եւ հասուն տարիքի մարդ չդարձանք: Ամէն պահ՝ չորս կողմս կը նայիմ, ամէն տեղ՝ մանուկ կը տեսնեմ, չե՛ս կարծեր որ անուես ասո՛ր համար Մանուկ է մայրիկս ասոր նախագացումը ունեցեր է: Մեզմէ երկու սերունդ վերջը միայն պիտի սկսինք հասնող մարդ դառնալ, երբ շարդերը մոռնանք: Բայց պիտի մոռնա՞նք, այո՛, այո՛, մեր զաւակները, բայց ո՛չ մենք: Հապա եթէ մոռնանք՝ ի՛նչ կ'ըլլայ, բան մըն ալ չի փոխուիր, մեր միտքը ամէն բան չէ, մեր մարմինն ալ կրնա՛յ մոռնալ արդեօք: Ու առանց մեր մարմնի՛ն ի՛նչ է որ մեր միտքը, երբ ա՛ն է իր գործողութեան աղբիւրն ու հողը: Մարմինը մտածումէն անկախ կ'ապրի, առանց մարմնի՛ ո՛ր է մտածումը, ո՛ր է միտք ըստածը, That is the question: Եւ քանի որ Անգլիա հասանք, եւ քեզի նմանաբանութեան մասնատր հակում մը ցոյց տուի, ըսենք որ կատարեալ Արքայ Լիքը եղանք, ա՛ն որ խարխափելով կը յառաջանայ դէպի իր կորսուած արքայութիւնը, զայն գտնելու համար»:

Հոս ձայնը կտրեց: Մկրատով մէկէն կտրեց զայն, գնաց կորսուեցաւ հեռուները, եւ յանկարծ ինքն իր վրայ դառնալով՝ ինքզինքին վերադարձաւ եւ իմ մէջս առաւ հետեւեալ պատկերը: Պատկերը մէկու մը որ երեսխայական խաղով մը զբաղած է: Փոքրիկ, նարինջի մը չափ փայտէ գունդ մը կայ, որ իր մէկ կողմը՝ մատիտի ծայրին չափ նուրբ ցողուն մը ունի, եւ հակառակ կողմը՝ երեսուն քառասուն սանթիմէթրի չափ առասան մը. Ասոր միւս ծայրը վերջապէս՝ անցում է նոյնպէս փայտէ կոր մը, որ վերի ցողունին չափ ծակ մը ունի մէջտեղը: Գունդը իգական է, կոթը՝ արական: Խաղը կը կայանայ առասանին ծայրէն կախուած գունդը հաշիով եւ ըզգուշութեամբ վար իջեցնելուն մէջ, որպէսզի երբ կոթէն բռնողը առասանին տայ անակնկալ ցնցում մը՝ գունդը վեր գայ եւ մուտքի ծայրին նմանող ցողունը մտնէ կոթին փափուկ կողմին մէջտեղը եղող ծակին մէջ: Վստահ եմ՝ մտքով այդ խաղին տրամադրուեցաւ, եւ նոյն ատեն՝ սենեակին մէջ փոփոխութիւն մը ուշադրութիւնս գրանցեց: Թուցած էի Մանուկի ձայնին հեռացումովը, ո՛չ թէ դադրումովը, որովհետեւ ակնջներուս մէջ դեռ կը լսմենար ան, այնպէս որ ուշադրութիւնս անզբաղ մնացած՝ դիրքութեամբ գրառուեցաւ սենեակին մէջ տեղի ունեցող փոփոխութենէն: Ասոր հեշտարար տպատրութենէն սփոփում՝ գլուխս վերցուցի անոր դէմքին վրայէն, որ ան կարծես զամուռն ըլլար, այնքա՛ն դժուարութեամբ կատարեցի այդ գործողութիւնը, տեսակ մը գոհունակութեամբ ու դժգոհութեամբ միաժամանակ, որովհետեւ քովի սենեակի միակ պատուհանի ապակիներուն վրայ մութը կ'երեւէր: Ատենէ մը ի վեր նստեր էր, որ նայուածքիս տակ՝ հալելու ո՛չ մէկ փորձ ըրաւ: Մութը հոն տեղադրուած էր կատարելապէս,

եւ զիս մեղադրող բան մը կար վրան, անոր համար՝ որ ժամանակը անցած էր, որ ես մեկնած պէտք է ըլլայի: Բայց մնալու որսխտութիւնս մեծ եղաւ նոյն ատեն, հոն մնալու որոշումովս, երբ մանաւանդ յիշեցի Մանուկին խօսքը՝ «տուն մի՛ երթար սասնկ օրով, միեակ մնալը լաւ բան չէ»: Առտուրնէ ի վեր միեակ էի, եւ միեակութեան գաղափարը բնաւ միտքս չէր եկած, ու յանկարծ՝ Մանուկին խօսքը յիշելով՝ տարօրինակ սարսափ մը արթնցաւ սրտիս մէջ, ու իր ուրուի ճանկերով սեղմեց բովանդակ կտրծքս: Խորհիլ որ ամբողջ գիշեր մը, եւ յաշորդաբար հազարատր գիշերներ այդ տեսիլքով պիտի անցնէի: Այս մտածումը բաւական եղաւ, որ ճակատես քրտիկնքը սկսի առատօրէն հոսիլ: Բարեբախտաբար՝ Մանուկ մէկ անգամէն յաշողած էր փայտէ գունդին մատիտի ծայրը կոթին վրայի ծակին մէջ մտցնել: Նոյն արագութեամբ՝ ուշադրութիւնս վերադարձաւ իրեն, ու հանգչեցաւ իր դէմքին վրայ, որ այնքան սփոփարար էր:

«Կարծես բաւական ցացուցի գլուխդ իմ պատմութիւնովս: Քեզ հետաքրքրողը այն չէ՝ թէ ինչպէ՛ս մակաբոյծ դարձայ, այլ այ՛ն՝ որ մակաբոյծ դարձայ: Այնպէս չէ՞: Գրած ես եւ նկարած ես: Ինչ որ քեզի կը վերաբերի գիտնալն է, թէ անիրաւ չես, թէ մէկը, ամենամօտ բարեկամդ չես ամբաստաններ, կ'ուզես միայն զինք զգուշացնել, եթէ ոչ՝ այս ձեռով մէկու մը հետ կարելի չէ յարաբերութիւն մշակել:

Աքտրի եւ չետագային՝ որբանոցի տարիներուն՝ ամէն մարդ իմ հաշտոյս օգտագործելու ձգտումս ձեռով մը ձմեռնաբուն մտած էր: Գիտե՛ս, միասին տեսած ենք, Ալպեաններուն մէջ, երբ թոքախտատորներու ապաստանարանը ինձի այցելութեան եկած էիր, այդ կենդանիները, մկնաբշերը, որոնք ամբողջ ձմեռը կը քնանան իրենց գետնափոր որջերուն մէջ, ու գարնան կ'արթննան, իրենց ընդհատուած կեանքը վերսկսելով: Ինքուն մտնելու հակումս ալ արթնցաւ երբ հոս՝ այս քաղաքին մէջ հաստատուեցանք: Ասիկա ըսել չէ որ ձմեռնաբունի ընթացքին՝ նման կամեցողութիւններ չեն եղած. միայն թէ անոնք եղած են թեթեւ, սաղմնային վիճակի մէջ, ունենալով սակայն իրենց արդիւնքները: Կարելորը հո՛ս է, հոս է որ կազմատրուեցաւ, եւ այս քաղաքն ալ իր դերը ունի ատոր մէջ: Սկիզբները՝ կը կանգնէի փողոցներուն եզերքը, դիտելու համար կարգն ու կանոնը այդ հսկայ՝ տակնուվրայութեան մէջ, մարդիկ փողոցներէն կ'անցնէին կարծես մեծ բան մը ընելու համար: Ամէն բան նոր կը թուէր ինձի, այրերը իրենց լոջութեամբ, եւ կիները իրենց գեղեցկութեամբ: Կը զմայլէի պարզապէս: Ժամեր կ'անցնէի դուրսը, փողոցները, սրճարանները, թէյարանները, ուր նոյնքան սքանչելիքներ կային, որքան՝ բազմաթիւ նկարահանողներու մէջ: Եւ մայթերը սիրելիս, մայթերը որոնք ամենէն հետաքրքրականն էին, ամէն վայրկեան՝ նորոգուելով, գոչները, ձեւերը, բոլորումները այսպէս անդադար կը փոխուէին, կը նորոգուէին,

իրենց այլազանութեամբ, եւ վերջապէս երբ քիչ մը անելի կատարելագործուեցաւ տեղական լեզուի ճանաչումս՝ մտայ գրատուն մը: Այն ատեն է որ յանկարծ մէջս արթնցաւ ընթերցանութեան այս անասնման, անյագորդ ծարաւ: Ծանողիի գրատունն էի օր մը, ամէն օրուան պէս: Այդ գրատունը գիրքերու խճողում ճեմարան մըն է, կը վազես մէկ դարակէն միւսը, գիրք մը կ'առնես, կը նայիս, կը թղթատես, յետոյ՝ ուրիշ մը: Այդպէս շուրջը ընելէ եւ ետեւի երկու մասերը լմցնելէ ետք, առջեւն դուրս ելած ատենս էր, աչիւն, գիտե՛ս. նոր հրատարակ ելած գիրքերու ցուցադրութիւնը կ'ըլլայ, լայն տախտակի մը վրայ դիզուած նոր հեղինակներով կամ նորեկուկներով: Իճծի անծանօթ ըլլալն էր անոնց նորութիւնը, անոնց մեծադաղակ յայտարարութիւնը նոյնիսկ: Հեղինակին անունը Փըրուստ էր, Մարսէլ Փրուստ: Անոր առաջին հատորը ձեռք արի ու սկսայ կարդալ: Եւ յանկարծ այնպիսի ձեւով մը ինկայ ընթերցանութեանս մէջ՝ որ ուր ըլլաւ իսկ մոռցայ: Պաշտօնեան շուրջս կը դառնար, աչքին մէկը՝ վրաս, եւ երբ վերջապէս իմ աչքերէս մէկուն հանդիպեցաւ, կամաց մը շշուշաց քթիս տակը՝ պէտք է մտածեմ ա՛յ տուն երթալու մասին: Գիրքը վճարեցի եւ թեխս տակը առած՝ եկայ տուն ու սենեակս քաշուեցայ: Ամբողջ զիշերը կարդացի: Այս նոյն սենեակն էր: Ո՛չ մէկ ատեն՝ չէի ուզած *Արարատ* պանդոկը երթալ: Սկիզբէն գիտէի որ մեզի համար քիչ մը սուղ էր: Բարեբախտաբար՝ շուտով գործ մը գտած էի, ու երէքով կ'աշխատէիք: Մայրիկս եւ քոյրիկս հիմակուան պէս կարի գործին մէջ նետուած էին: Ես ալ Տիկին Մոմիին քովն էի, որ հին զաղութի հայերէն է, ամուսինը՝ ֆրանսացի: Խանութքը պահակի պէս բան մըն էի, բայց շատ երկար չտեսեց: Հիւանդացայ: Երբ այդ օրը՝ մայրիկս առաւօտուն եկաւ զիս արթնցնելու, բնաւ ուժ չունէի ոտքի ելլելու, կէս քունի մէջ՝ կը շարունակէի կարդալ գիրքը, այսինքն՝ զիս ճամբորդել կու տար ան աշխարհիս մէջ, պնկաւ մը՝ որ կարծես թէ կը շարունակէի իրապէ՛ս կարդալ զայն: Ծիշոյ այդ պահուն մաքիս գոլորիշիներէն հագիս դուրս պրծած՝ պիտի պատասխանէի մայրիկիս, երբ սոսկալի հագս բռնեց, քիչ մնաց՝ պիտի խեղդուէի: Բաւական ատենէ ի վեր՝ հագս հանդարտած էր, բայց այդպէս մէկէն ի մէկ, առանց պատճառի, նոր եւ պղիտալի հագիս յայտնութիւնը անսպասելի էր, բնույթը փոխած էր, տարբեր էր. անելի մտահոգիշ էր: Մայրիկս ի հարկէ՝ տակն ու վրայ եղաւ, խորհելով որ նորէն թոքախտը կը փորփորէր: Ի վերջոյ՝ բժիշկը շնչահեղձութիւն յայտարարեց, բայց իր զարմանքը մեծ էր երբ իմացաւ որ ստիկա առաջին յայտնութիւնն էր: Բայց վերջինը պիտի չըլլար, եւ պիտի դառնար յաճախադէպ: Ամէն անգամ որ ընթերցանութեան ծարաւս չափը կ'անցնէր՝ հագի խեղդուութ մը կ'ունենայի, եւ որովհետեւ այդ ծարաւը սկիզբ եւ վախճան չունէր՝ հիւանդութիւնը լաւ մը տեղաւորուեցաւ մէջս: Անշուշտ մեր նկարիչը պիտի ըսեր, ինչպէս ըսաւ արդէն, որ ես եմ իմ հիւանդութիւնս ստեղծողը, որպէսզի ժամանակիս

տէրը ըլլամ, կարդամ, կարդամ ու գրեմ»:

Սողեակին մէջ բանալիին ձայնը լսեցաւ: Մանուկ իր ձմեռնաբու-  
նէն թէւ չարթնցաւ, աչտուհանդերձ՝ փոթ մը երեցաւ քօին ձախ կողմի  
ձայրը, գծուեցաւ ու արուեցաւ միաժամանակ: Մանուկը բերանը բանա-  
լով՝ ըսաւ՝ «ահա՛ եկան»: Ինչո՞ւ համար զարմանքս ա՛յլքան մեծ եղաւ:  
Զարմանալու ի՞նչ կար: Դրան սողեակին աղմուկը կը յայտարարէր, որ  
տուն եկողներ կաշին, եւ անոնք միայն մայրն ու քոյրը կրնային ըլլալ: Պարզ  
էր՝ անոնք տուն կու գային իրենց այցելութենէն ետք, որքան ալ շատ տե-  
ւած ըլլար ան: Բայց այդ ձայնը որ ըսած էր «ահա՛ եկան» միայն երաժըշ-  
տութեամբ կարելի է վերարտադրել: Արտադրուած բան մը ճիշդ է որ երբեք  
կարելի չէ նորէն արտադրել, քանի որ մտանութիւնը օրէնք չէ, ինչպէս  
այս պարագային՝ իմ զգացածս, իմ զարմանքս կարելի չէ բառերով  
բացատրել: Ինձի այնպէս կը թուի՝ թէ միայն երաժշտութիւնը պիտի կրնար  
ո՛չ թէ ուրեմն վերարտադրել, այլ առնուազն՝ կրկին փորձել նոյնը զգաց-  
նել, առնուազն՝ մեկնաբանել, այլապէս՝ մեղք պիտի ըլլար, քանի որ պիտի  
կորսուէր: Ինձի համար՝ «ահա՛ եկան» ինչ ձայնը բան մը կու տար եւ իսկոյն  
ես կ'առնէր, գաղտնիք մը յայտարարող մեղքի մը զգացումը, մէկ խօսքով,  
կարճ, կտրուկ, անգոյն, անիմաստ, որ մտատանջութիւն մը կը յայտնէր,  
այնպէս ինչպէս թէ անոնք յաիտենականութիւն մը տեսած ճամբորդութենէ  
մը վերադառնալին, մինչդէռ «շուտով կը վերադառնանք» ըսելով՝ մեկնած  
էին երկու երեք ժամ առաջ: Բայց այդ յաիտենականութեան զգայութիւնը  
կար նոյնպէս Անահիտին մտատանջ ձայնին մէջ, երբ ան շունչը բռնած՝  
վազելով ներս մտաւ, ներողութիւն խնդրելու համար եղբօրմէն «հաւատա՛,  
իմ անուշիկ եղբայրս, ինչ ալ ըրինք՝ չեղաւ, ուզեցին որ անպայման ճաշի  
մնանք»: «Ա՛հ» ըրաւ, ինձի դառնալով, «Պարոն Արմենակ, ցառակցու-  
թիւններս, ա՛հ, ինչպէ՛ս ըսեմ, ես կրնամ հասկնալ թէ ի՞նչ կը զգար, ձեզի  
պէս արուեստագետ մը, ո՞վ գիտէ ինչքա՛ն կը տառապիք: Ներեցէք մեզի,  
որ ասանկ օրով՝ խնջոյքի գացեր ենք, բայց կարելի չէր խուսափիլ»:

Այդ պահուն՝ ծանրաբալլ ու փքուոյց, փեհեզեայ թերթութիւնները  
շալկած՝ ներս մտաւ Վարոսեաններու նախկին Տիկիւնը, այնպէս՝ ինչպէս  
երբ ժամանակին, Մանուկի ըսածին նայելով, Զարիֆեանի խաղացած  
իրիկունը՝ թատրոնին սրահը մուտք գործած էր, ու յառաջացած իր շքեղ  
քալուածքով մինչեւ առաջին կարգի աթոռները, բոլոր հանդիսականնե-  
րուն հիացած նայուածքները իր վրայ կեդրոնացուցած, կարծես՝ արա-  
բողութիւն մըն էր տեղի ունեցածը, ուր անոնք ընդ միշտ իրենց ծառայու-  
թիւնը հռչակելու համար եկած էին, եւ ոչ թէ բեմին վրայի թատերգութիւնը  
դիտելու: «Բեմը սրահին մէջն էր» ըսեր էր երեկոյթէն յետոյ Զարիֆեան  
դերասանապետը: Մանուկը փոխանցած էր ինձի օր մը այդ խօսքը, մօրը

վրայ խօսած ատենը, բայց հակառակ իր նուրբ տաղանդին՝ չէր կրցած ինձի փոխանցել նաև մօրը ամբողջ վեհությունը: Ու ահա՛ կանգնած էր ան իր ամբողջ վեհությունքը, զմայլած աչքերու առջև, պահ մը վարանելով: Առաջ տղո՛ւն պիտի դիմէր խօսքը թէ ինձի՞: Վարանումը հարկաւ երկար չէր տևած, յայտնուած էր միայն ակնարկին մէջ, որ մութ բան մը ունէր, կարծես վարագորուած, երբ ան քառորդ շրջան մը կատարեց, նախ՝ ինձմէ դէպի տղան, եւ անմիջապէս յետոյ՝ իր տղայէն դէպի ինձի: Ու գլուխը մէկէն կանգ առաւ, տխուր ժպիտ մը կազմուեցաւ բերնին անկիւնը, կամ թերես իր նայուածքն էր, որ մեղրի պէս հալելով՝ հոսած էր երեսներուն վրայ ու եղած տխուր ժպիտ: Եւ այդ անառիկ ամբողջ կարծես՝ տեղէն շարժեցաւ, ձեռքս սեղմեց աստղերով ծածկուած մատներուն ծայրերովը, ուրկէ անշուշտ բացակայ չէր տեսակ մը նրբութիւն որ իր ֆիզիքական ուժին արտապայտությունն էր, բայց որ կրցած էր անոր հագցնել փափկութեան մը ձեռնոցը: «Ա՛հ, կը ներէք, սիրելի Արմէն, ինչո՞ւ չէ, ասանկ օրով՝ կարելի է ձեզ սիրելի կոչել, այնպէս չէ՛, հաւատացէ՛ք, անկեղծօրէն կը բաժնեն ձեր ամբողջ վիշտը, բայց ինչո՞ւ այդպէս շտապով եղաւ, որ մարդ բան չգիտցաւ, կը ներէք, խնդրե՛մ»:

Ա՛յնպէս հրապուրուած էի, փոշիի պէս ալուած, տարուած, անկիւն մը նետուած, որ չկրցայ անմիջապէս պատասխան տալ իրեն: Ու ինք հանդարտ համբերութեամբ մը եւ յօժար կեցուածքով մը՝ կը սպասէր պատասխանիս, եւ անցնող ամէն մէկ վայրկեան լայնատարած կործքը ու աչքերուն վրայ անշարժացած նայուածքը նոր ու անսովոր վեհությունք մը կը լեցնէր, եւ ինձմէ բան մը կը պակսեցնէր, զիս կը պզտիկցնէր, ո՛չ միայն քանակով, այլե՛ւ՝ որակով: Եւ ինքզինքս կորսնցնելու վրայ էի, եւ կ'ըլլայի հետզհետէ պատռուած տափառով Պոլսոյ այն խլլոտ լակոտը՝ որ հացին շերտը կրծոտելով թաղային դպրոցէն ետքը, իրիկունները փողոցներէն շուքերու պէս անցնող գեղեցիկ կիները կը դիտէր, հոգիին խորքէն հիանալով անոնց վրայ իբրեւ անհասանելի, անհրապական հորիներ: Եւ ահա անոնցմէ մէկն է որ ինձի կը նայէր իր իսկ տանը մէջ, հետզհետէ այնքա՛ն մօտ, այնքա՛ն մաշտակամ՝ որ ահա՛ ճակատը պիտի դպէր ճակատիս: Այն նայուածքը, որ զիս ինձմէ կը պարպէր, պահ մը եկաւ՝ ուր այդ պարապուծութիւնը նոր գոյացությունք մը սկսաւ լեցնել, եւ ես Մանուկին տեղը առած՝ պիտի նետուէի այդ հսկային ծոցը, «Մայրի՛կ» պոռալով: Տեղէս չշարժեցայ սակայն, նայուածքս միշտ անոր յառած, անոր պղտորած նայուածքով դմքին, որ երկար էր իր սուր կզակովը, եւ ունէր ցցուն աչտուկըրներ եւ կարմիր աչտեր, հոն՝ ուրկէ կը սկսէր դմքին բաւական խոշոր մասը, որ յետոյ դէպի վարը նեղնալով՝ անոր կու տար սուրի մը հատու կազմութիւնը այդ երկար մարմնին վերեւը, փարթամ ծառի մը նման, որուն ճիւղերը խտացած ըլլային առատ տերեւներով, երկնքին վրայ գծելով շքեղ

ապարանք մը: Մէջ ընդ մէջ՝ սարսափ մը կ'ապրէի, մտածելով որ այս ա՛յն կիճն էր՝ որ օրն ի բուն մէջքը ծռած աղջկանը հետ կարի աշխատանքին վըրայ՝ յորդոր կը կարդար, «շուտ, աղջիկս, քիչ մը աւելի շուտ, սըրոնք ընենք եւ ուրիշ բերե՛նք: Ա՛խ, անգամ մը փրկենք եղբայրդ, անկէ վերջ՝ լայն կ'ելլենք մէջէն»: Համեստ աշխատանքով համեստացած եւ իր փայլը կորսնցուցած այս կիճը նոր մարմնացում մը ստեր էր, պարզապէս Ամիրեաններուն «ընդունելութեան» գացած ըլլալով, ուր վերագտած էր իր հին, կորսուած, թաղուած մթնոլորտը, անոր շինծու, սուտ կրկնութեամբը, որ բաւական եղած էր սակաւն զինքը կերպարանափոխելու համար: Հասարակաց բան մը կար այս պահուն՝ աչդ կնոջ եւ Ծուշանին միջեւ, ա՛յն՝ որ հիմա անցեր էր Ծուշանին Տիկին Վարոսեանէն, անոր հասունութեան վարպետութեամբ հարստացած, բան մը որ Ծուշան իր երիտասարդութեան անմեղութեանը կը պարտէր եւ այն զարմանալի հմայքին՝ որ աչդ կիճներուն կու տայ հենաուրուրոյին մը ու աչդ պատճառով իսկ՝ կ'ընէ զանոնք աւելի ցանկալի, նոր մօտիկութիւն մը ստեղծելով, որովհետեւ անառիկ, անբռնելի, արգիլուած պտուղի մը հետ գործ ունինք: Չէ՛, գուր չէ աչդ վերջին բառը: Արդարեւ՝ անոնց մարմինը կը յիշեցնէ պտուղին խիւրը, որ լեզուին վրայ ա՛յնքան փափուկ ու հեշտալի է, մանաւանդ երբ տարաշխարհիկ պտուղի մը խիւսն է, ինչ որ հոս՝ պարագան է, տարաշխարհիկ՝ իրենց աշխարհէն դուրս: Եւ աշխարհէն դուրս ելլել պէտք է անոնց մօտենալու, մերձեանալու, անոնց վերադառնալու՝ համար: Յանկարծ փոփոխութիւն մը տեղի ունեցաւ աչքերուս առջեւ գտնուող նկարին վրայ, սկսաւ հալիլ, ու կարծես՝ հետըզհետէ անոր հալած տեղերէն նոր մը ծնաւ, մէկու մը նման որ իր հագուստները կը հանէ, միևնչեւ միևնոյն ատեն՝ նորը կը հագնի: Պատկերը կը ներկայացնէր բանակի մը նահանջը, ո՛չ թէ պատրուած այլ՝ կռիւի ճակատէն թիկունք հանգատեան իջնող բանակի մը, որ տակաւ իրմէ կը հեռացնէ կռիւներու չարագուշակ տեսիլները: Այս փոփոխութեան պատճառը ի հարկէ՝ տեսողութեանս տկարացումն էր, լսողութեանս զորացումով մէկը կ'երթար հանգիստի, իսկ միւսը կը պատրաստուէր նոր, խորհրդաւոր, գործունէութեան մը: Ամբողջութեամբ լսողութիւն եղած՝ ուշադրութիւնս գրաւուեցաւ սկանջիս մէջ յայտնուող ձայնէն: Բացարձակ ճշմարտութիւնը չէր անշուշտ, բացարձակ բան գոյութիւն չունի: Խնդիրը այն էր՝ որ աչդ ձայնը, իր կարգին սպասելով հրապարակ գալու համար, կը շարունակէր տեսական, երբեք տկարանալ չգիտցող կոտորացող ցալի մը պէս: Համաչափ, ընդհատ բայց յամառ՝ ձայնը անդադար կը կրկնէր: Եւ յանկարծ անապարանքը նկատեցի: Օ՞ ոչ, շարժումներուն մէջ չէր, շարժումները դանդաղ էին, ինչպէս որ պէտք է ըլլայ պատկառանքի տէր մարդուն մօտ: Աչդ անապարանքը, հրմշտուքը կարելի է ըսել, տեսողական որեւէ յատկութիւն չունէր: Այդպէս՝ սովի ատեն խանութներու առջեւ հերթի կանգնած ամենէն առաջինը ըլլալու համար, մեր արժանապատուութիւնը անխոցելի

պահելու հախանձախնդրութեամբ՝ աւելի խելագար կը ձեւացնենք մենք  
 զմեզ, ուրիշները հրմշտկելով, ու աճապարանքով հերթին գլուխը կ'անց-  
 նինք: Ատոր նման էր Տիկին Վարոսեանի ձայնը երբ ըսաւ «Սիրելի Ար-  
 մեն»: Ուրախ էր այդ նոյն օրը Արմենին հանդիպելուն համար իր տունը,  
 հանդիպելուն՝ բախտի բերմամբ, եւ անմիջապէս գործի անցնի կարենա-  
 լուն: Նախ՝ Տիկին Վարոսեան պէտքը չէր ունեցած, զինքը սեփականաց-  
 նելու փորձին ատեն, «ս» մը աւելցնելու անունին ծայրը, վարժ ըլլալով իր  
 հին միջավայրին մէջ՝ խօսքը անաւարտ ձգելու, զայն յանկարծ իր ձայնովը  
 իմաստաւորելով, որով խօսքը կը ճամբորդէր դէպի խօսակիցին միտքը,  
 ծանր ու հատու շեշտի մը անկումովը, խօսքը ըստած ըլլար թէ պահուած:  
 Պահուիլն ալ շուարումի հետեւանք չէր - այդ միջավայրին մէջ՝ շուարումը  
 օրէնքէ դուրս է - կը կատարուէր հաստատ գիտակցութեամբ մը, ինչ-  
 պէս ներկայ պարագային, երբ Ամիրեաններու հիրաւիութեամբ՝ վե-  
 րագտած էր կորստած մթնոլորտը, ու անոր մէջ մտած գլխով ու ոտքով:  
 Այնպէս որ անունիս վերջին գիրին վրայէն կը գլորէր ո՛չ թէ սեփականա-  
 ցումը յատկանշող «ս»ն, այլ՝ իր տուած շեշտը անոր, ու այդ շեշտը ծանր էր,  
 յանկարծ բանի մը վրայ զոցուող ձեռքի մը պէս: Ծիշո՞ր այդ շեշտին հետ  
 միաժամանակ՝ աչքին մէկը, կարծեմ ձախը, դանակի հարուածի նման  
 այնպիսի նայումք մը նետեց իմ նայումքիս խորքը՝ որ պորտէս բիրտ  
 ցնցում մը իջաւ եւ կծկուեցաւ ցայլքիս ծայրը: Այս երկու գործողութիւննե-  
 րը կայծակի պէս արագ եղան. միեւնոյն ատեն՝ ցնցում եւ կծկում, ու ան-  
 բողջ մարմինս սեղմուած նարինջի մը պէս՝ թոյլ տուաւ որ զիստս ի վար՝  
 հոսի գաղջ ու լարծուս հեղուկը: Սերմնահոսութիւն մը պատճառած էր ինձի  
 Տիկին Վարոսեան, իմ ամենամտերիս ընկերոջս մայրը, եւ ինձի այնպէս  
 թուեցաւ՝ որ հոսքը զիստս ի վար չէ՝ որ տեղի կ'ունենար, այլ կ'ուղղուէր իր  
 պատճառին, կը խառնուէր անոր: Պատճառ եւ արդիւնք կը նոյնանային,  
 քանի որ այս միութեան երկու եզրերէն ո՛չ մէկը, ո՛չ ալ միւրը անջատարար  
 նոյնը չէին, բայց ինչպէս արդիւնքը՝ պատճառ, պատճառն ալ կրնայ իր  
 կարգին արդիւնք դառնալ: Այս պարագային՝ այդ երեսոյթը գործադրող  
 կամ դիրացնող զրգիւրը կը հանդիսանար Տիկին Հոփսիսմէի հախադա-  
 սութեան երկրորդ անդամը, առաջինը ըլլալով՝ «Ա՛հ, կը ներէք»ը, որ  
 պարզ է աճէն մէկուն համար ու ըսել կ'ուզէ. «Ա՛հ, կը ներէք (իշտէ պիտի  
 ըսեմ, ի՛նչ կ'ուզէք՝ մտածեցէ՛ք, հոգս չէ), ինչո՞ր չէ...», թէւ այս մեկնա-  
 բանութեամբ փակագիծի մէջ դրուած մասը կը ջնջէ հատուածին գլխաւոր  
 անդամը, որ է «սիրելի Արմեն (ս)», իբրեւ տեսակ մը կապանք կամ ձեռ-  
 նակապ, որպէսզի յանցապարտը իրմէ չխուսափի: Երկրորդ անդամին  
 գալով հիմա, շեշտը պէտք է դնել անպայման «ասանկ օրով»ին վրայ,  
 հակառակ յաջորդ հատուածին՝ «անկեղծօրէն կը բաժնեմ ձեր վիշտը ան-  
 բողջովին», որուն աւելորդարանութեան համոզուած է, բայց չա fait bien  
 dans la balance, եւ մնացեալը պարզապէս bla-bla է, ինչպէս կ'ըսեն ֆրան-

ասցիները, ու Եւա-Եւան ամէն խօսակցութեան ամենաճոխ մասը կը կազմէ: «Ասանկ օրով» անպայման՝ վիշտի օրով կը ճշանակէ, եւ այն ատեն՝ Տիկին Վարդուհանին եւ Շուշանին համար կորսուած օրով: «Ասանկ»ը արդարեւ ունէր վիշտի երանգաւորում մը, բայց պէտք է նկատել որ այդ բառին ընկերակիցը գրկուած էր նոյն երանգաւորումէն, որովհետեւ ըսողին միտքը յանկարծ հեռացած էր վիշտի գաղափարէն, եւ հնարած էր նոր գաղափար մը՝ ազատութեան օրով: Ամենէն ճարպիկը իր ուղեակնը կը նետէ որսին վրայ, եւ ա՛յդ է որ ըսել կ'ուզէ երկրորդ անգամին լրացուցիչ հատուածը՝ «կարելի է ձեզ սիրելի կոչել»: Ամբողջական ըլլալու համար, նետենք հիմա մեր ուղեքը սա Եւա-Եւա-ճերուն մէջ, եւ պիտի տեսնենք որ շարտայայտուած ամէն մէկ բառի շեշտին կամ անոր մարմնին դրոշմուած ամենադուրեւ շարժումին մէջ՝ խտտոր իմացուած բան մը պահուած է: Ու խորհելով այդ մասին՝ Տիկին Վարդուհանի նախադասութեան շորրորդ ու վերջին հատուածը կ'առնէ յանկարծ շատ անելի ծանրակշիռ իմաստ մը, եւ եւ եւ՝ որ զայն Եւա-Եւա-ճերու ծոցը նետեցի, ֆրանսացի ժողովուրդը թերեւտոյկի վերածելով, մինչդեռ ժողովուրդ մը հիմարութեամբ օրերէ ի վեր փորձառութիւն ըսուած թաքուն գիտութեամբ մը հարուստ ըլլալով՝ անհարափ կ'ինչպէս պիտի բացատրուէին անելորդ նկատուած բառերը: Այնպէս՝ ինչպէս կը պատահի երազներուն մէջ, անկարելորդ դէպք մըն է ամբողջ գաղտնիքին տէրը, գաղտնիքին բանալին: Հիմա կարծես այդ բանալին գողցած՝ դուրը կը բանամ անով, եւ սենեակը մէկէն լուսաւորուելով՝ այդ լոյսին մէջ ինծի կ'երելի նախադասութեան շորրորդ անգամին իմաստը, իր ամբողջ անողորութեամբ: Լսողութեանս մէջ կը հնչէ դեռ իր ձայնը, յուզում ու ընկճում մէկու մը ա՛յն աստիճան ցաւակից վիճակը արտայայտող ձայն մը՝ որ մարդ նախ դժուար կը հաշտուի այդ ձայնին մէջ տեսակ մը ճեղքին, մտքին համար գրեթէ աննշմարելի ճեղքին: Բայց եւ այնպէս՝ այդ ճեղքէն կը հոսի տակաւին մասնաւոր թոյն մը, իր դանդաղ ազդեցութեամբ, որովհետեւ «ինչո՞ւ համար այսպէս շտապով եղաւ, որ մարդ բան չգիտցաւ»ը ուրիշ բան չէ եթէ ոչ՝ «այսպէս լաւ եղաւ՝ որ մենք չստիպուեցանք երթալ կեղծաւորութիւն ծախելու»: Ահա հոս թաքնուած է գործի մարդու իսկական մտայնութիւնը: Ինչքա՛ն ալ անգույժ ըլլայ՝ միակ ճամբան է կեանքին մէջ, զգացումներէն հեռու մնալով սեփականատէր դառնալու: Ներկայ պարագային՝ սեփականացուածը՝ ե՛ս էի:

Տիկին Վարդուհանի հազիւ ակնթարթ մը ականջները տնկած մնաց, պատասխանին ունկնդրութեան համար, եւ ըլլա՛յ անոր ուշացումին, ըլլա՛յ անոր անկարելորդութեան պատճառով՝ անիկա իր ցայտուն աչտերով երեսը դարձուց դէպի իր աղջիկը, որ աչլալած էր մօրը ունկնդրութեան մէջ ու լսեց, թէ ինչպէս տարբեր ենթահող մը ունեցող խօսքով մը իրեն կը դիմէր ան: Այնպէս որ աղջկան շփոթութիւնը իր լրումին հասաւ, որով-

հետև անմիջակաօրէն ըմբռնեց, թէ ի՛նչ ըսել կ'ուզէր մայրը, եւ այտերը ոռնելով՝ կարմրեցան: Երբ Տիկին Վարդուհան Անահիտին դառնալով՝ «այնպէս չէ՞, Անահիտ» ըրաւ, իր համբաւաւոր նախադասութեան ամբողջանալուն պէս՝ Անահիտը, Տիկին Վարդուհանի արժանաւայելի աղջիկը, անմիջապէս դէմքին տուաւ նախկին դիրքը, զիս ունկնդրողի ու պատասխանիս անհամբեր սպասողի իր դիրքը: Եւ չակնկալուած կերպով, այսինքն՝ պատասխանելու իմ կարողութեանս կասկածովը ընդունեց պատասխանս, որ նոյնհետային իր կասկածը փարատեցուց, բայց անհասկընալի մնաց իրեն ու ցցել տուաւ իր լայն ու երկար հասակը, ճանճանջազեղ դէմքով մը, զոր միմիայն Օսթերլիցի յաղթական արեանն առջեւ կանգնած Նափոլէոնը ունեցած ըլլաւ է: Ըսել որ ի՛նչ տիրակալութեամբ ես ալ իրեն պէս ցցուած էի սրունքներուս վրայ ու արձակած վճիռ ձայնով մը՝ «շուտով եղաւ, որովհետև ես այդպէ՛ս ուզեցի»:

Քիչ առաջուան սերմնահոսութենէս վերջը, որ զիս ուժգօրէն ցնցած էր ու ինձի տուած էր անցաւոր գօրութիւն մը, եղած էի վերը գրուածին պէս՝ փոշի, ալուած, տարուած անկիւն մը, ու նետուած: Չեմ գիտեր՝ զգայութի՛ւն՝ մըն էր միայն, թէ իրապէս Տիկին Վարդուհան ձեռքը երկարած էր, ափովը ժողված էր անկիւնը հաւաքուած փոշիի դէզը, ու զայն գրպանելով՝ զիս ալ անոր մէջ անհետացուցած էր:

Ատկէ ետքն է որ Մանուկին կողմը դարձաւ իր փառաւոր հասակովը, եւ աղաղակեց սրտակոտոր՝ «ա՛խ, տղաս, քեզի չհարցուցի անգամ թէ ինչպէ՛ս ես, չեմ կրնար ըսել որ ձանձրացած ըլլալու ես մեր երկար այցելութեան ընթացքին, քանի որ քու ամենէն շատ սիրած ընկերոջդ հետ ես», ու կամաց մը ծռեցաւ եւ տղուն ճակատին իր կծկուած շրթունքներուն ծայրովը՝ համբոյր մը դրոշմեց: Մանուկ այն ստեն իր թմբիկէն դուրս գալով՝ աչդպէս, առանց իրական հետաքրքրութեան՝ հարց տուաւ. «ինչպէ՛ս, գոնէ լաւ անցուցի՞ք ձեր ժամանակը»: «Ինչո՛ւ չգիտցածի կու գաս, կարծես թէ իրապէս չես գիտեր» պատասխանեց մայրը առանց ժամանակ կորսնցնելու, «եթէ յօրանջելը ամօթ բան մը չըլլար՝ պիտի ըսէի որ յօրանջելով անցուցիք ժամանակնիս: Նոյնիսկ ձեռքերնիս բերաննիս չէինք կրնար տանիլ, որպէսզի չկարծեն թէ կը յօրանջենք, բայց խելոգութեանը մեր ներքին ձանձրոյթին մէջ: Այնպէս չէ՞, Անահիտ»: Բայց Անահիտ, որուն վրայ յոգնութեան հետքերը անուրանալի էին եւ որ մէկ ձեռքովը եղբոր արօռի չեմակին կռթնած էր, ոտքերուն ծայրերուն վրայ ցցուելով՝ «ա՛հ, մայրիկ» մը արձակեց զոց սենեակին ապականած, դեղերու հոտերով թանձրացած օդին մէջ, առանց հասկնալի ընկելու, թէ ի՛նչ ըսել կ'ուզէր: Կը հաստատէ՛ր մօրը ըսածը, թէ ըսել կ'ուզէր՝ «ա՛հ, մայրիկ, ինչո՛ւ կը ստես», քանի որ քիչ մը վերջը՝ պիտի իմանալի ես ալ՝

թէ զուարճացեր էին, նոյն Անահիտին ըսածին նայելով՝ *comme des folles* մանաւանդ երբ եղբայրը հարցոյց ի միջի այլոց՝ թէ Տիկին Ամիրեանին «բանգի»ները խնայուած էին իրենց: «Աստուած իմ, խենթեմալիք բան է» ըսաւ Մանուկին մայրը, տեղէն ցատկելով, «ատանք ալ բա՛ն, արժես չարժես տեղը՝ *բանգի* մը կը փակցնէ, անդադար բեզի լիշեցնելու համար որ Անիի անկումէն վերջ Բագրատունիներու թափափուքներէն է, որ աստիկա պէտք չէ մոռնայ: Եւ անա իշտէ իր շխարհ աղջիկը, ա՛յո պիտի իրենք ոսկերիչ կ'ըսեն) հաշկաւ ինքզինքը պիտի թափափէր, վրան գըլուխը անխնամ, նոյնիսկ կաթիլներու պէս ներկուած եղունգներով, փողոցի բոգերուն նման՝ կարմիրը թափուեր է: Այնպէս չէ՞, Անահիտ»: «Բայց մայրիկ» ըրաւ Անահիտ լանկարծակաւ ընդվզումով մը, որ ընդվզում ըլլալով հանդերձ՝ ա՛յո չէր, որովհետեւ իրմէ տեսանելին անլի վիատութիւն մըն էր, «Բայց մայրիկ, ինչո՞ւ այդպէս կ'ըսես, վրան անա՛նկ երանութեան հով մը կար, մօտաւոր մայրութեան երանութեան հով մը»: «Երանութեան հով, երանութեան հով», կնկնաց Տիկին Վարուսեան Հոփսիմէ, ուտերը թոթուելով, ինչ որ Անահիտին ըսածները կը ջրէր, կը թաղէր, կը նետեր մինչդեռ աղջիկը կը լամառէր իր կարծիքին մէջ, եւ ոտքերը գետինը զարնելով՝ «այո՛, երանութեան հով մը, ծով մը», ստիպելով մօրը, որ փոխէ խօսակցութեանը նիւթը, երբ մայրը ո՛չ միայն նիւթը փոխած էր, այլ նաեւ իր ձայնին շեշտն ու գոյնը, երբ աղջկան ճկուող ձայնին մէջ հոտը առած էր թշնամիին, որ պաշարուած էր իր ամբողջին մէջ տեղ մը: Եւ աղջկան թօռած ձայնը խեղդել փորձելով՝ իր դերասանական ձեւերով վայլուներ արձակած էր, որոնց շնորհիւ թշնամին «ես բշած» ըլլալու գերագոյն գոհունակութիւնը կ'ունենար, այնպէս որ միաժամանակ «առաջ քշելով» բառերու իր բանակը՝ «ամա՛ն», ըրաւ, «ա՛լ զանելիք բան դարձաւ, մէկ անգամ, երկու անգամ՝ հասկցանք, բայց ամէն անգամ անտանելի բան է, ընդունելութեան բոլոր մասնակիցները, դուն ալ մէջը, ստիպուած են նոյն խաղը խաղալու, աշխարհուելու, բանի որ արժանապատուութեան հարց մըն ալ կայ, որ ոտնակոխ կ'ըլլայ: Հա՛, կարծես թէ ես ինձի կ'ըսես այս ամբողջը, մենախօսութիւն կ'ընեն, *մոնոլոկ* կ'ընեն, այսպէս չէ՞ ֆրանսերէնը, Պարոն Արմէն, մաքիս կը հետեւիմ, անոր կը դիմեն եւ ոչ թէ ձեզի, իբրեւ թէ դուք հոս չըլլալիք. այս հոտած պատերուց մէջ՝ ինձի կ'ողբամ միայն, Աստուած իմ, իրապէս զգուելի բան դարձաւ, բայց հոն տեսնէիք զիս, այս անգամ՝ ճշմարիտ ողբերգակ եղած էի, իրաւ է, հիւրը կուսակալին կինն էր, եւ Տիկին Ամիրեանին նպատակը հայերուն շարդուփշուր ըլլալը չէ, նպատակը ֆրանսուհիէն մեծ ապապրանք մը կորզելն էր, դարձնելով մեզ մարդկութեան անարժան, ցոյց տալով մեզ իբրեւ մեղքեմալիք ու գութ շարժող արարածներ: Կ'ըսեն՝ օր մը հետը աղջիկ մը տարեր է, լեզուն բերնին մէջ եղող աղջիկ

մը, որպէսզի գործը աւելի ընդարձակէ նոր աշխատակիցներ պատրաստելով, բայց խեղճը ա'յնքան նեղուեր է. ա'յնքան գաներ է՝ որ մէջ մըն ալ չէ կրկներ այդ անմարդավայել տեսարանը: Հասկցա՞ր. հիմա Մանուկ, դուն որ կը հիանայիր Տիկին Ամիրեանի յաջողութեանը վրայ, եւ մարդասիրական իր գործունէութեան վրայ: Հայ կեհիկներուն գո՛րծ հաշթայթել, բայց ի՞նչ միջոցներով: Չէի՞ր գիտեր, հա՛, ա՛ն հիմա քու Աշխէնիդ մայրիկը, հո՛ս է գաղտնիքը իր աղջիկը ժամագործին տուած ըլլալուն, որովհետեւ ժամագործը մութացիկէն տարբեր է: Ահա՛, օտարին առջեւ՝ գտալլը, մեր առջեւ՝ մեծ տանտիկիներուն ծախող: Հա՛ կեցէ՛ք, ամենէն կարեւորը մոռցայ, գլուխ գործոցը, այս բառին իսկական առումով գլուխ գործոցը, եա՛, պէտք էր մտածել, ամէն մարդու ընելիք բանը չէ, գիտէ՞ք ինչո՞ւ համար հայ աղջիկը հետը տարեր է, որովհետեւ հայ աղջիկը իրապէս ապրեր է Եփրատի եւ Տէր Զօրի ողբերգութիւնը, եւ ո՛վ կրնար աւելի լալ պատմել մեր պատմութիւնը, քան թէ գայն ճշմարտօրէն ապրողները, որոնք հաւանաբար պիտի չկարենային իսկ պատմել, ապացոյց՝ որ խեղճ աղջիկը ապշած մնացեր է, եւ չէ կրցեր բերանը բանալ անգամ»: Տիկին Վարսուեան մէկէն ի մէկ ձայնը գետին զարկաւ եւ անմիջապէս՝ գայն ետ առաւ, թեւ ստոմ մը գծել վերջ միջոցին մէջ, իր ձայնին պարունակութեամբը, որ հիմա դէպի առօրեան փոխադրուած էր: Իր այդ գեղեցիկ թոհչքէն ետք, ինչպէս թռչունը իր ներդաշնակ ու շքեղ թեաքախումներէն վերջ՝ ծառի մը ճիւղին վրայ թռած՝ թեւերը կը փակցնէ մարմինին, կարծես երբեք անկէ բաժնուած չըլլային, գլուխը կը խօթէ վզի փետուրներուն տակ ու կ'անշարժանայ, Տիկին Հոփսիսիմէ տեղատրուեցաւ անմիջապէս առօրեայ խանդով արտասանուած բոցավառ բառերուն դէմքին տուած լուսեղէն պայծառութեանը վրայ, եւ հոն՝ ստուեր մը իջաւ, ինչ որ իր մորթին կարճնային սպիտակութեան՝ խանձած կատուի մը գոյնը ստաւ: «Աղջիկս, ի՞նչ կեցեր եմք, հաշվան հաշվան կը խօսինք, երբ վաղուան յանձնելիք ա'յնքան գործ ունինք»: Ու երկուքը մէկ լքեցին սենեակը, իրենց ետեւէն զոցելով դուռը: Տիկին Վարսուեանի մէկնելէն ետքը՝ իր երկար սրունքներուն պլուտող բեհեզներուն շրջինը, ինչպէս խաղաղ ծովուն վտովտուն ալիքները իրիկնային լուրիւնը կը լեցնեն իրենց փսփսուքով, սենեակին մթնոլորտին մէջ տակաւին ատեն մը շրջեցաւ, եւ երբ վերջապէս շիջեցաւ՝ Մանուկ, առանց գլուխը վերցնելու կործքին վրայէն, մեղմ ու չեզոք ձայնով մը ըսաւ՝ «ընդհանրապէս՝ թռչնային կեանքին մէջ արուններն են, որ կը գեղգեղեն, գիտե՛ս ինչո՞ւ համար: Ահա քեզի նմոջ մը իզական գեղգեղանքէն: Հա՛, յաճախ չէ որ պատահած է այս բանը, հազիւ երկու երեք անգամ, եւ ամէն անգամուն՝ քեզի նման մէկու մը ներկայութեան տեղի ունեցած է: Երբ «քեզի նման» կ'ըսես՝ չհասկնաս թէ նկարիչին համար է խօսքս, մօրս լեզուն քակողը արական վայելչութիւնն է: Կը խորհիս որ իմ վայելչութիւնս ինձմէ՛ կու գայ, կը սխալիս,

ամբողջ ի՛ր աշխատանքն է, իր կամքին արդիւնքը, տարիներով, տարիներով, եւ ահա՛ սա վայելուչ տղան, *սանտի* տղու մը պէս, եւ դուն կ'ըսես՝ Մակարոյծ: Բոլոր մակարոյծները այսպէս են, վայելուչ ու գեղեցիկ, նոյնքան գեղեցիկ որքան՝ վեներտիկեան լամբերը, զորս մեծ բաղաբներու ծառուղիներու երկայնքին՝ բարտիներու ճիւղերէն կը կախեն: Ուրիշին արիւնովը կ'ապրին: Ապրելու համար բնաւ ձեռքը ձեռքին չզարնողները այդպէ՛ս կ'ըլլան: Զարմանալի է սակայն, ասանկ օրով, ասանկ դժբախտ օրով, ֆրանսացիները իրատունք ունին եղեր, երբ կ'ըսեն թէ *le malheur des uns fait le bonheur des autres*: Դուն բախտատու ես, Արմէն, ծնողքդ ձգած ըլլալուդ համար: Հիմա առողջ եւ ազատ կ'ապրիս: Ես ապրելու ժամանակ չունեցայ: Դեռ պատանի՛ հանդիպեցայ այն սարսափելի բանին որ ներսիդին կը քնանայ, եւ զոր մենք կ'արթնցնենք: Եթէ չարթնցնենք՝ լա կ'ըլլայ, ծառի մը պէս ազատ կը մեծնանք, բայց եթէ մե՛նք չարթնցնենք՝ ուրիշները կ'արթնցնեն: Ազատ ծառը հորիզոններով կ'ապրի, մինչդեռ մենք կը մեծնանք նեղ ու առանց հորիզոնի վայրի մը մէջ, հորիզոնը մեզի գոնէ հեռուն նայիլ պիտի տար: Ի՞նչ է այդ բանը, Աստուած իմ, ա՛յնքան փնտռեցի կոկորդէն բռնելու ու խեղդելու լոյսով, բայց ինչպէ՛ս ընել երբ ան ո՛չ դեմք ունի, ո՛չ մարմին, ո՛չ կշիռ, ո՛չ ալ տարածութիւն: Տեսողութիւնը իր լատուկ գիծը ըլլալ կը թոյն: Այդպէս է անկախ է մեր կամքէն, եւ սակայն՝ մեր կամքին թաքուն ցանկութիւնները կատարողը: Մեր կամքին զաղտնի ուզածները կը կատարէ, եւ մենք չենք կրնար անոր վրայ բռնութիւն բանեցնել, որովհետեւ չենք գիտեր թէ ո՛ր է այդ բանը: Տեղ չունի, ո՛չ ալ անուն՝ որ կանչես: Բան մըն է՝ այդ բանը: Ոչինչը: Այդ օրը կ'անիծեմ ես այսօր բայց ի՛նչ կարեւորութիւն ունի, եթէ ա՛յդ օրը չըլլար՝ ուրիշ օր մը պիտի ըլլար, բանի որ ան իմ մէջս էր՝ որդը, խնձորի մէջի որդին պէս, ու կը հսկէր նուազագոյն շարժումիս վրայ, իմ կողմէս սնօրհնուած ինծի տէր ու տիրական ըլլալու համար: Հայրիկիս բացակայութեան ատենն էր, օր մը, հայրիկս երբեմն գործով Պոլիս կ'երթար, ու մայրիկս սովորութիւն ըրած էր իր անկողիներն ուշ ելլելու, այնպէս որ այդ օրերը՝ մեզ Խնկեներն կը հագնեցնէր, մայրիկիս հրահանգով մեծ խնամք կը տանէր, երկար բարակ շաղակրատելով, խորհելով թէ այդպէս կ'ընէ մայրիկս, որովհետեւ անվերջ խրատներ կու տար՝ ճամբան ուշադրութիւն ընել, ձիւնին հետ չխաղալ, չսահիլ, չմսիլ, եւ զիս բրդեղէնի կը վերածէր: Այդ առաւօտ, երբ Խնկեներն արթնցուց զիս, աչքերս բացած չբացած՝ պողոսի «մամայիս երթալ կ'ուզեմ, մամայիս երթալ կ'ուզեմ»: Այդ Խնկեներն ինծի ականջ անգամ չտուաւ, զիս շուլեց, պլլեց, կապեց, ու ծրարի մը պէս՝ դուրս նետեց, ըսելով՝ «նայլ՝ որ չմսիս»: Հապա եթէ մսիմ, ըսի եւ ինքզինքիս, երբ մի՛նակ եղայ, մի՛նչեւ մէջքս ձիւնին մէջ բարձրացած: Եւ ես ալ տոյն պատասխանը. եթէ մսիմ՝ մեր տունը կը մնամ մայրիկիս հետ, հայրիկիս ամբողջ բացակայութեանը ընթացքին: Չեմ յիշեր թէ կանո՛րիս էր արդեօք, կամ

թէ ուշ մնացած, գիտեմ միայն որ փողոցները մարդ մարդասանք չկար: Ամենուրեք՝ ճեփ ճեփմակ ձիւնը նստեր էր, ծառերու ճիւղերուն վրայ բամբակի պէս կլոր փունջեր կազմելով: Վերացած, ամէն ինչ մոռցած՝ կեցայ, նաչուածքս այդ գունդերուն վրայ կեդրոնացած, եւ ամենայն խաղաղութեամբ՝ կը սպասէի որ այդ փունջերը հալէին, ու անոնց տեղը՝ ծառը վխտար փոքրիկ պարիկներով: Թռչունները մէկ ծառէն միւսը կը փախչէին, թռուրդալով, ու ճոռոդելով, արծաթի պէս պսպղացող ձմեռնային արեւոտ օդին մէջ: Չէի ուզեր դպրոց երթալ, կ'ուզէի մայրիկիս հետ ըլլալ: Չարմանալիօրէն զգուելի երեսաց դպրոցը ինձի այդ պահուն: Ուրիշ երեսաներու հետ կռիւ ըրածի պէս՝ կիս կատար հանուեցայ ու նետուեցայ ձիւնին վրայ, զայն նախապէս սոսնակոխելէ ու խառնշտկելէ վերջ: Երբ մէկը զիս տուն տարաւ, ձիւնոտ ծառերէն իջած պարիկները ինձի հետ էին, եւ ես ինքզինքս կը կարծէի երկնքին մէջ: Տունը՝ աչքերս չբացի, մայրիկըս չէի ուզեր տեսնել, որպէսզի ան կարծէ թէ շատ գէշ կերպով ստոած եմ: Ո՛չ թէ զինքը տազնապեցնելու համար, այլ՝ իր բովը մնալու եւ երկարօրէն առնել տալու համար: Օրերով պիտի մնայի այդպէս մայրիկիս հետ իբրեւ հայրիկիս փոխանորդը, քանի որ ան տունէն մեկնած էր: Կ'երազէի բամբակէ փունջերուն, որոնք ձիւնոտ ծառերուն վրայ առտուան արեւուն՝ պիտի բացուէին, ու ամոնցմէ ցատկոտելով՝ գոյնզգոյն պարիկները պիտի գալին շուրջս հաւաքուելու եւ ինձի հետ խաղալու: «Ծօ՛, մէջ մը ըսէ՛ նաչիմ, որո՞ւն հետ կոտեցար, որ երթամ հախէն գամ»: Կը պնդէի, թէ մէկու մը հետ կոտած չէի, ինչ որ ճիշդ էր անշուշտ, բայց ինչպէս միշտ՝ ո՛չ ամբողջովին, ու մայրիկս չէր հաւատար, կ'ուզէր անպայման որ հերոսացած ըլլայի, եթէ ծիծաղելի ալ թուէր՝ ըսածս ճշմարտութիւնն էր, եւ ես հպարտ էի անով: «Ինձի հետ, ինձի», ըսի, «մամա՛, գիտեմ որ վրաս պիտի խնդարս, ես ինձի հետ կոտեցայ»: «Դուն խենդ ես, ինչպէ՛ս մարդ կրնայ ինքզինքին հետ կոտիլ»: Եւ մայրիկս, արհամարհելով իմ ցափռոտութիւնս, դարձաւ Խնկեցիկին՝ «նայէ՛ ինչպէս ստուեր է, Խնկեցի, անկողին տար, ես հիմա կու գամ»: Կը քնանաս կոր, Արմէ՛ն» ըրաւ Մանուկին ձայնը, ուրթեակ մը բարձրանալով, եւ այդ բարձրացումն էր՝ որ զիս արթնցուց, ցնցելով: Արթննալը ճիշդ բառը չէ՛, քանի որ չէի քնանար երբ «կը քնանաս կոր» ըրաւ, բայց ուրիշ բառ ալ չունիմ ձեռքիս տակ, ու ստով պիտի գոհանամ, միայն թէ ստիպուած եմ ըսելու որ գրեթէ նոյն բանն է: Մանուկին պատմելու միապաղաղ, միալար ու միօրինակ եղանակը ուղեղս թմբկի մէջ գլորեր էր, եւ անոր խորխորատէն բարձրանալը յանկարծակիօրէն քունէն արթննալու կը նմանէր, ինչպէս ինքն ալ անպայման նման երեւոյթի մը ենթարկուած էր, երբ անպատեկիօրէն պատումը ընդհատեց, ըսելու համար՝ «Արմէ՛ն, կը քնանաս կոր», ինքը որ չէր քնանար թէեւ քանի որ պատմութիւնը կը շարունակէր: Ըսել չեմ ուզեր, որ մտքով կը շարունակէր, ու ես կ'ընդունէի իր մտածածը, մտքիս մէջէն հետեւելով իր ըրած պատմու-

թեան, այլ՝ ամենէն արձակունակ կերպով՝ երկուքս ալ թմրած էինք ծանրացած մթնոլորտին մէջ, երկար ատեն Տիկին Հոփփսմէի եւ Անահիտի հեռանալէն ետքը, ան՝ իր ձայնը միօրինակութեամբ հանելով, ես՝ զայն լսելով: Հետեաբար՝ գլորած ըլլալով թմբիին մէջ, հարկ եղաւ ինձի բարձրանալ անկէ, մագլցելով եւ ճանկոտելով ապառաժները, ձեռքերս արինելով, ու ասով կ'ուզեմ ըսել թէ որքա՛ն բիրտ եղաւ վերադարձը դէպի իրականութիւնը, ապացոյց որ չէի քնանար: Մանուկին ձայնին շնորհիւ տարուած էի հեռուները, ուրկէ յեղակարծ կը վերադառնայի, առանց կապս խզած ըլլալու Մանուկին պատմութեան հետ: Ըսել կ'ուզեմ որ լրջօրէն կը հետեւէի Մանուկին պատմածներուն, մանաւանդ որովհետեւ անոնք կը կազմէին սնունդը այն պատմութեան՝ զոր ես կ'ապրէի, հաւանականօրէն՝ կէս առ կէս զուգահեռ ի՛ր պատմածին: Ան կ'ապրէր պատմելով, ես՝ մտիկ ընելով: Այսպէս՝ երբ Խնկեցի Մանուկը մօրը անկողինը կը տանէր, զինք իր հուժկու բազուկներուն մէջ առած, հաչքս կը տարուէր Մուշի ձիւն ու փութին մէջ կորսուած դաշտերէն: Հաչքս «Մուշի» չէր ըսեր, ան կ'ըսէր «Մշոյ», Մշոյ դաշտեր, ինչ որ բոլորովին նոյնը չէր: «Մշոյ դաշտեր» աստօթիւնը կալուն, անփոփոխելի իրականութիւն մըն է բաղդատաբար Մուշի դաշտերուն, ու դեռ չարտասանուած՝ կը սկսէր հեռու, հեռուներէն, պատմութեան խորքէն բարձրանալով մինչեւ իր ոգեւորուած պահը ժամանակի ոսկեճամուկ քղամիջը հագած, եւ հիւթական իրականութիւն մը ըլլալէ առաջ՝ հոգեղէն էութիւն մը ըլլալով: «Ժրատուք ունիս», ըսաւ անմիջապէս ինքը, մտածելով որ պիտի բողոքէի, որովհետեւ քնացող մը նոյնիսկ արթննալէ վերջ՝ կը պնդէ թէ անարդար են իրեն հանդէպ, թէ աչքերն անզամ չէ գոցած, ու միշտ կ'ենթադրուի որ հանրային վայրի մը մէջ քնանալը ամօթալի արարք մըն է: «Ժրատուք ունիս» ըսաւ, «ատենն է, կրնաս երթալ, երբ մարդ կը քնանայ՝ մի՛նակ չէ, քնացող մարդը մի՛նակ չէ: Լաւ կ'ընես առայժմ՝ տուն երթալով միայն երբ քնանալու պէտք ունենաս»:

\*\*\*

Հիմա անունդ կը գրեմ: Բայց ո՛չ միայն անունդ, կը գրեմ նաեւ քեզ, որպէսզի կարենամ քեզի ըսել՝ դուն, եւ անմիջապէս զաս մտնես սա իմ լեզուիս մէջ ու դառնաս կենդանի բոլոր անոնց համար՝ որոնք կ'ապրին լեզուիս մէջ, իրենց ալ լեզուից մէջ, քանի որ իմ լեզուս իրենցն է, ու ամէն պահ՝ կը մղուիմ գրելու, գրածս հրատարակելու: Բայց հրապարակը իրեն չի պատկանիր, ուր իմ լեզուս աքտրեալ մըն է, եւ ուր անկարելի է զայն անոնց հաղորդել: Եւ ասիկա իմ ցաւերէս է՛ն մեձն է, իմ լեզուս ամէն տեղ ապրելու անկարելիութիւնը, որովհետեւ կ'ուզեմ որ ըլլաս ամէն տեղ,

ամենուն համար ապրիս, երբեք չմնաս հողակոչտիդ տակ, դուրս ելլես անկէ, ըլլաս ամենունը: Բայց արդեօք ամենունը չե՞ս: Երբ կը գրեմ ինձի փոխ տրուած լեզուով, որուն մէջ կ'ապրիս դուն, ի վերջոյ՝ տուողին պիտի վերադառնայ ան, բոզ մը: Պիտի դադրի իմս ըլլալէ: Կ'ապրիս անոր համար՝ որ այսօր երբ ես կը գրեմ անունդ՝ կ'ըսեմ թէ ասիկա պատրանք է, իրականը այն է՝ որ անոնք՝ բոլորը որոնց կը պատկանի լեզուս ինձի հետ միասնաբար անունդ կը գրեն, ինչպէս կը գրես դուն ալ, դուն: Անոնք բոլորը կը գրեն ու կը կարդան ճիշդ ինձի պէս. երբ կը գրեմ Շուշան, Շուշան՝ ոչ միայն գրածս կը կարդամ, այլ գրածս գրելէս առաջուանը, ա՛յն՝ որ միակ սեփականութիւնս է, միեւնոյն գրուածը կը պատկանի բոլոր կարդացողներուն: Իրաւ է, երբ անունդ կը գրեմ՝ գրածս կարդալով քեզ կենդանութեան կը բերեմ, բայց ես այնպէս՝ իմ սեփականութիւնս կը մնաս երբ անունդ կը կանչեմ, երբ կու գաս կը կանգնիս ձայնիս մէջ: Այն ատեն՝ կ'ըլլաս կամքիս ուզածը, ես ոչ թէ ա՛ն՝ որ կ'ըլլայիր քու կամքովդ, ա՛ն՝ որ անպայման պիտի խափանէր իմ գեղեցիկ տեսիլքս, իր դարձարձիկ ծամածոութիւններով: «Տէր Աստուած, ինչո՞ւ այդպէս կը կարծես, բացառիկ չեմ, ես բոլոր աղջիկներուն պէս պարզ աղջիկ մըն եմ» կ'ընէիր, ես այնպէս կը խնդայիր՝ որ խնդուքը ըսածներդ կ'առնէր, չորս հովերուն կը ցրուէր, որպէսզի անոնցմէ ինձի բան մը չմնայ, որպէսզի ես քեզմով միշտ անօթի մնամ, ինչպէս հիմա՝ երբ ամսուադ զազանի մը պէս եմ, որ սակայն ահա՛ կը կշտանայ քեզմով, քեզի հետ գլուխ գլխի, դուն որ գլուխ չունիս այսուհետեւ: Այսուհետեւ՝ չունեցածովդ կը մեծարուիմ:

Ահա ե՛ս ալ գլուխս կը վերցնեմ, ու զայն արօտի յեանակին կը դնեմ, ես կ'ըսեմ՝ Շուշա՛ն, եկո՛ւր: Անմիջապէս վազելով կու գաս, թէն առանց իսկապէս վազելու, քանի որ չվազած՝ արդէն իսկ դէմս կը գտնուիս: Կէտ մըն էիր, փոշիի հատիկ մը, օդին մէջ պահուըտած, ու յանկարծ դէմս է քու զարմացող, զհսցող, չգիտցող, գուշակող դէմքդ, որ շրթունքներուդ հրամայեց, կամ առանց իսկ հրամանի, ինչպէս զաղտնաբար ծորող կարծիւր ուռեկով մինչէն յետին սահմանը հետապնդուած, ու սահմանին ձեռք ձգուած, ձայն կը հանէ «ահա՛, ես եմ»: Ես սակայն ո՛չ մէկ ձայն կայ սեմեակին մէջ, ո՛չ իսկ շշիւն մը: Ինչպէ՛ս լսեցի ձայնդ, յստակ, հնչուն որպէս թանկագին մետաղը, այն միեւնոյն կրծքային ձայնը՝ որ յանկարծ մինչէն ճակատիդ ետեք կը բարձրանար ու կ'իջնէր, երբ նստած տեղդ կը ցատկէիր մարախի մը պէս, ու գիրկս նետուելով՝ քու անհատնում ես անվախձան քեզի սիրելու համար, հարկաւ դուն ալ ինձի պիտի սիրես աշխատելով, պիտի աշխատիս ինձի սիրելով, ինձի պիտի սիրես աշխատած ատենդ, աշխատանքդ ձգելով առանց որ զայն ձգած ըլլաս, քանի որ ե՛ս եմ քու աշխատանքդ, աշխատե՛ իմ վրաս»:

Օր մըն ալ անա այսպէս նստած էի պատկերակալին առջեւ, ու կը մտածէի, անել դրութեան մը մէջ, վրձինը ձեռքս, թոյլ ու մեղկ, երբ դուն՝ անպիտան աղջիկ գիրկս նետուեցար, թեւերդ դիրք վզիս շուրջ ու ըսիր՝ «իճճմով զբաղէ՛, ինչո՞ւ համար ինձի քու տունդ բերիր, եթէ պիտի չզբաղիս իճճմով, այո՛, այո՛, չար, ամբողջ օրը պիտի զբաղիս, հետս պիտի խաղաս, ինչպէս կատուն մուկին հետ, հապա՛ ի՞նչ կարծեցիր, ի՞նչ կարեւորութիւն ունի, եթէ ետքը՝ ինձի ուտես, ինչպէս կատուն մուկը կ'ուտէ»: Այո՛, անա այսպէս, ըսելուդ հետ մէկտեղ՝ երկու ճերմակ ձեռքերովդ կործքդ բացիր, եւ անոր անսահման ճերմակութեան մէջ կորսուեցան ձեռքերդ, ու վառեցին անոնք երկու կլոր, կըսկլոր լապտերները, եւ սենեակը լուսաորուեցաւ լոյսով մը՝ որ արծաթ էր, սառուց, պաղ լոյս մը, որ կը թրթռար, կը դողդղար անկախ, միջոցին մէջ եւ յանկարծ անշարժացաւ, սենեուն անիրական, կամ անէի իրական քան թէ իրականը, երբ ձեռքիդ մէկը ափ մը առաւ անկէ ու նետեց մեր առջեւի պատկերակալին վրայ, իմ անել մտածումներուս առարկայ նկարին վրայ, նկարը լուսաորելով լուսնային լոյսով մը, յամառ ու անանցանելի, պատմութիւնը հեքիաթի վերածելով, ու անցողականը՝ մնայունի:

Այս ի՞նչ գեղեցկութիւն է, ի՞նչ ազատութիւն: Մոռցած ընելիքներս, կը վազեմ, կու գամ տուն, հեքս բռնած կործքիս մէջ, կը կենամ, ու երբե՛ք, ո՛չ մէկ ատեն՝ չեմ կրնար ետ չնայիլ: Ետ կը նայի առաջ ալ, երբ դուն, ո՛վ դուն, կը հետեւէիր ինձի, կը բարձրանայիր սանդուղէն, տնտնալով անոր վրայ, մէջքդ կը շտկէիր, բայց կը շտկէիր շարժումով մը՝ որով կործքդ կը ցցուէր յանկարծ հրաշալիօրէն, դէմքդ՝ անշարժ, արձանացած ուտերդ վեր, յաճախ մերկ ու ճեփ ճերմակ ուտերդ յառնած դէմքդ, նայուածքդ՝ բացակայ, անգոյ, բայց այնքան ներկայ՝ որքան երբ բացակայ էր, ներկայ բացակային մէջ, կամ բացակայ մտածումին մէջ: Եւ այս ամբողջէն ետքն ալ՝ անձայն խնդուք մը, ինչպէս արեւը երկնքին մէջ, խնդուքի ժխտում մը, որ խնդուքը ձայնով կ'օժտէր ու միաժամանակ՝ անլսելի կը դարձներ: Ատով իսկ՝ այնքան հնչեղ խնդուքով մը օժտուած դէմքդ երկուքի կը բաժնուէր, մէկը՝ քեզի, միւսը՝ ինձի, մնացեալը՝ ընթերցողին: Եւ յանկարծ՝ մտածումը սանդուղիի աստիճանին վրայ նետելով, զայն կոխելով կոխկոտելով՝ կը բարձրանայիր ի՞նչքան արագութեամբ, եւ սակայն կը կանգնէիր մէկէն, երբ ես հագի մտքիս մէջ պատկերացուցած էի «եկո՛ւր» մը: Եւ դուն չէիր գար գալով հանդերձ, որովհետեւ այդ դեռ չարտասանուած «եկո՛ւր»ն էր, որ կը պառակտէր ժամանակը, սանդուղիին միջոցը վիհի մը վերածելով, բայց երբեք ինձի այդ աստիճան մօտիկ չէիր, որքան՝ վիհին միւս եզերքին վրայէն: Բնաւ պէտք չէ ետ դառնալ, սանդուղիին վրայ, ինչպէս փողոցին մէջ: Քիչ առաջ՝ անունս յետցի, փողոցը, քու ձայնովդ արտասանուած, քու ձայնիդ օրօրներուն մէջ թաթրխ-

ւած, ինչպէս լեղի հապը շաքարին մէջ, եւ անմիջապէս, ամբողջ մարմնով՝ ետ դարձայ: Գուն չկայիր, եւ սակայն ձայնը բու ձայնդ էր, սողոսկուն, ինձի հասնելու դժուարին ճիգով մը մտահոգ: Քու չարահճի օրերուդ ձայնը, մեր սիրամարութեան առաջին օրերու ձայնդ, երբ կը կանչէիր ու կը պահուրտէիր: Ետեւէդ չէի գար, չէի փնտրեր քեզ, եւ դուն կը յամառէիր չեղեմալ, կծկուելով ծածկուած անկիւնիդ մէջ, բայց քեզմէ մեկնած ձայնը ինձի հասած էր: Ինձի հասած ձայնիդ մէջ էիր արդէն եւ կը քալէիր ինձի հետ: Յանկարծ վազելով կու գայիր, պոկունքդ խածած, սրդողած դէմքով, որուն թափանցկութենէն անդին սքողուած-ցուցադրուած անբարտաաւանութեամբ՝ պարտութիւնդ յաղթանակի, իբրեւ թէ յաղթանակի վերածած կ'ըլլայիր:

Այսպէս սանդուխտէն կը բարձրանայի, հակառակ խնդրօքիդ, չըսելու համար հեզանքիդ, իմ ետեւ, քանի մը աստիճան վարը: Զ մէջ՝ խնդրքը մասամբ ալ հիացում էր, հետեւաբար՝ անձայն, անհնչիւն, ո՛չ իսկ հեք մը, հեքի մըմուռ մը: Ինչպէ՛ս կը խնդայիր, քահքահելով, ծաղրելով անճոռնի վազքս: Ծուտ տուն հասնիլ, դուրը անաղմուկ բանալ, հակառակ երազնաց վազքիս, որպէսզի ամենէն կարճ ժամանակով՝ քեզ շարտեմ տետրակիս կոչս էջերուն վրայ, ու ինչպէս թշուճը հէքիաթին՝ բու մոխիրէդ մարմին առնես ու ժպիտս ինձի, եւ ես ժպիտիդ մէջ վերջապէս միմակ ըլլամ, առանձին, շնչելու համար օդդ, օդը՝ որուն մէջ սակայն միշտ ներկայ բացակայ՝ դուն, շնորհիւ գրիչիս թողթիս վրայ հանած քքքութի շշիւնին, երբ անունդ կազմուի՝ հեռանաս մանրաքայլ, յամրաքայլ, տոտիկ-տոտիկ, միշտ, անդադար, յատեմապէ՛ս ներկայ ըլլալու համար: Երբ ներս մտայ սենեակս, ապշանքս մեծ եղաւ: Մէկը նստեր էր սեղանիս առջեւ, ու կը գրէր անունդ, գլուխը առանց վերցնելու, երբ ես ներս մտայ: Գացի, լուռ, պատուհանին առջեւ դրած աթոռին վրայ նստած, նայուածքս առանց հեռացնելու այդ կատաղի յամառութեամբ գրել շարունակող մարդէն: Գլուխը ծռած էր թողթին զայն սեւեռելով իր ակնոցին հաստ ապակիներուն ետեւը պահուած կարճատես աչքերով: Անկարելի էր անուն մը դնել՝ ինձի ծանօթ այդ մարդուն դէմքին վրայ: Միայն քիչ մը նեղ ճակատին տակէն՝ նայուածքը ինձի կը հասնէր, իմ նայուածքս կը լեցուէր իրմով, վերստին կը պարպուէր, երբեք լեցուն չմնալով, Դանաչեան կոչսերու տակաւին նման: Այս լեցուելու-պարպուելու պարագան է որ գրգիռ մը եղաւ, գրգռեց միմչեւ ողս ու ծուծս, այնպէս որ ստիպուեցայ ոտքի ելլել: Կամաց կամաց, ուրուականի նման, մօտեցայ սեղանին, որուն առջեւ մարդը գրելու սիսիփոսեան տուաչտագին աշխատանքի մը ենթարկուած էր: Կանգնեցայ գլուխն ի վեր, ետեւէն, ուսերուն վրայէն դիտեցի իր թիպարտի աշխատանքը, որ զինքը խօլաբար յափշտակած ըլլալ կը թուէր, քանի որ գլխուն վրայ մազ մը անգամ չչար-

ծնցաւ, երբ գիտէի որ շունչս կը սաւնորէր իր ա՛նչքան առատ, արուեստագէտի մագերէրը: Զեռքը անդադար կը վազէր թողոթին վրայ, մաքուր, անհիծ թողոթը արատաւորելով, եւ ատկէ նոյնքան հաճոյք կը դրոշմուէր դէմքին գիծերուն վրայ, որքան՝ վաւաշորդներուն մէջ, երբ կոյս մը պոճկու աշխատանքով տարուած են: Զեռքը ձախէն աջ կը վազէր, կը սահէր անարգել, ձախէն աջ, կրկին ու կրկին, շարունակ վերադառնալով մեկնակէտին, վազելով բառերուն ետին, անէի յամառ քան թէ որսորդին վազքը որսին ետեւէն, խառն ի խոռն, եւ սակայն հրաշալի համաձայնութեամբ մը ջրվէժի մման հոսող բառերը հետապնդելով, զանոնք կապտելու, թողոթին վրայ դնելու տենդագին, ախտավարակ ճիգով մը: Երբեմն՝ գրիչին ծայրը ակնթարթային կոտարակով մը յանկարծ կ'անշարժանար, անմիջապէս վազելու համար վերստին հոսանուտ բառերուն ետեւէն բայց արդէն իսկ ամբողջ գունդ մը, ամբողջ բանակ մը կորսուած էր մացառներուն մէջ, եւ գոնէ անոնց թափոփուքները կաղն ի կաղ ու արիւնլուայ՝ կապտելու հոգեկան ջանքը կը տեսնուէր: Թէ ինչքա՛ն տեւեց այդ շարժարանքը՝ չեմ գիտեր, միայն թէ կեցած տեղէս իր ուտերուն վրայ նայուածքս կ'երթար կու գար դիմացի պատուհանին, որուն առջեւ նստած էի քիչ մը առաջ, բայց արդէն պատուհանին ապակիներուն վրայ լոյսը կը նուազէր, սկսէր էր հալի հեւքի մը պէս, սկսէր էր ստուերոտիլ, եւ գիշերը անսանձ, կամակոր եւ սակայն անշեղ քայլով՝ կը թեւակոխէր, կը հաստատուէր, կարծես՝ յախտենոյթեան համար: Այն ատեն՝ անհամբերութիւնս կոկորդիս մէջ պինդ, ժայռացած, անդիմադրելի հետաքրքրութեանս խառնուած՝ զլուխս ծռեցի ուտերէն վար, եւ ամբողջ էջը մէկ շունչով կարդացի: Այսպէս սանդղոխէն բարձրանալով, հակառակ անձայն խնդրփոդ, չըսելու համար հեզկանքիդ, իմ ետեւս, քանի մը աստիճան վարը, ձայնիդ մէջ՝ խնդուքը մասամբ ալ հիացում, հետեւաբար՝ լուռ, անհնչիւն, ոչ իսկ հեւք մը, հեւքի մըմուռ մը, շուտ տուն հասնիլ, դուռը անաղմուկ բանալ, հակառակ երազնաց վազքիս, որպէսզի ամենէն կարճ ժամանակով՝ քեզ շարտեմ տետրակիս կոյս էջերուն վրայ, ու ինչպէս թոշունը հէքիաթային՝ քու մոխիրէդ մարմին առնես ու ժպիտս ինծի, եւ ես ժպիտիդ մէջ վերջապէս միջակ ըլլամ, առանձին, շնչելու համար օդդ, օդը՝ որուն մէջ սակայն միշտ ներկայ բացակայ՝ դուն, Ծուշան, դուն կը հասկնաս այս «դուն»ը, որ անունէդ անէի կը խելագարէ զիս, զայրացած մոլուցքով մըն է որ ձեռքս նետեցի գրիչը բռնող ձեռքին վրայ, վերջ մը տալու համար քու անվախճան եւ անկիրք անհաւատարմութիւններուդ, բռնեցի մարդուն ձեռքը, որ սեփականացուցեր էր քեզ, Ծուշան, որ սեփականացուցեր էր իմ սեփական զգացումներս, զորս գրի առած էր ան իրենց թաւալումին ընթացքին, ինձմէ գողցուած, բայց աւա՛ղ, ձեռքը իմ ձեռքս էր:

Այո՛, ձեռքը բռնած էի, եւ զայն թութի ծառ թութելու պէս կը ցնցէի

կատարօրէն պռռալով՝ գրիչս տո՛ւր, գրիչս տո՛ւր, այդ գրիչը իմն է, եւ ան տեղէն իսկ չէր շարժեր, կարծես ստուեր ըլլար, կարծես՝ կը լողար, զիցքը հետապնդողին ու բռնողին մակերեսին կը ծփար: Ձեռքը բռնեցի կ'ըսեմ, որովհետեւ այն ատեն, այսինքն՝ դեռ քիչ առաջ, այս տետրակը սկսելէս առաջ, ինձի այնպէս թուեցաւ՝ թէ ձեռքս դրի բառին վրայ, որ սակայն ճիշդ բառը չէր, բանի որ ձեռքս բռնած բան մը չունէր, ընդհակառակը՝ կարելի է ըսել անելի մեծ հաւանականութեամբ՝ ձեռքս էր բռնուողը, կամ - ինչպէ՛ս ըսեմ - ձեռքս բանի մը մէջ թաթխուած էր, բանի մը մէջ որ ո՛չ մէկ իրականութիւն ունէր, ինչպէս ըսի, կարծես՝ ձեռքս ստուերի մէջ թաթխած ըլլայի: Վերջը, երբ սկսայ գրել, գրելու ընթացքին՝ միտքս պայծառացաւ, այսինքն՝ անելի մօտ թուեցաւ, շատ անելի հուպ, գրեթէ իրականութեան կպած, եւ անոր իսկութիւնը կամ էութիւնը ինձի զգալի դարձաւ: Այնպէս որ յանկարծական կերպով՝ ձեռքս ետ քաշեցի, լարծուն զգայութեամբ մը թաթխուեմ, ուրկէ եւ անիմամալիօրէն յուսահատ, երբ անասհման զոհունակութիւն մը զիս գրաւեց, իրմով լեցուց պարպուած էութիւնս, իրական զգացումով ապրելու յոյս մը, որովհետեւ ձեռքս իրապէս եւ ո՛չ թէ խաբկանքով իրական ձեռք մը բռնած էր, տաք, փափուկ, թաշաչին, որ հեշտալի ճկունութիւն մը ունէր, միաժամանակ՝ պինդ, գրիչ մը բռնելու առակ, եւ այդ ձեռքը իմ ձեռքս էր, սեղանի բաց տետրակին վրայ պսակած, որուն մէջ կը յամառիմ տակաւին կապտել, բռնել, որսալ փախչող մտապատկերներս, մինչդէռ գիշերը կը սահի անվերադարձ, ընդարձակելով շրջապիտռ լռութիւնը, ու անձանօթ բան մը կը սկսի խլրտիլ, որ կրնայ լոյսին կեանքը ըլլալ գիշերուան արգանդին մէջ: Եւ քանի կը տարածուի լռութիւնը փոխանակ հետզհետէ մարմնելու, ուժասպառ, անելի՛ կ'երկարաձգուի, անելի՛ կը հարստանայ ան գիշերուան մէջ բարձրացող ոտնաձայներով, որոնց մասին չի կրնար որոշ կարծիք մը կազմել:

Վարսեաններէն մեկնելէս ետք, յիսուն քայլ առած չէի երբ կանգ առի: Կանգ առի, լսողութիւնս սրած մտիկ ընելու համար: Այնպէս թուեցաւ ինձի՝ որ մէկը ետեւէս կու գար: Մանուկը ըլլալու է, խորհեցայ, բան մը մոռցած ըլլալու էի: Մտքիս մէջ՝ գլուխս դէպի երկինք խրելու շարժում մը գծուեցաւ, ի հարկէ առանց գծուելու, զի՞ծը պատկեր մը պիտի կազմէր ի վերջոյ: Եւ պատկեր մը չկար անկէ մտքիս մէջ: Խաբուսիկ տպաւորութիւն մըն էր, միապաղաղ մթնոլորտ մը կը տիրէր հոն, անշարժ ու հեռաւոր բանէ մը եկող, որ միշտ անփոփոխ հեռաւորութիւն մը կը պահէր, եւ սաստիկ կը նեղէր, նեղացուցիչ էր: Մտքիս այդ սուր, լարուած վիճակը Վարսեաններուն մօտ մոռցուած բանի մը վրայ որեւէ արդիւնք չտուաւ: Ո՛չ, բան մը մոռցած չէի հոն: Յանկարծ՝ երկու ձեռքերս բանկոնիս աջ ու ձախ գրպանները տարի: Միայն ձախ գրպանիս մէջ բան մը ձեռքիս դիմադրութիւն ցոյց տուաւ: *Կոլուազ*-ի ծրարս էր, որ վայրկեան

մը՝ հոն մոռցած կարծեր էի, առանց խորհելու որ ծրարը բնա գրպանն ս հանած չէի, հակառակ սովորութեաւ: Ընդհանրապէս՝ ծխիկի ծրարս քովի սեղանին վրայ կը դնեմ, ամէն անգամ ձեռքս գրպանս շտանելու համար, բայց այդ ընելու չհարկադրուեցայ բնա, քանի որ չէի կրնար ծխել շնչահեղձութենէ տառապող հիւանդի մը ներկայութեան: Արդէն ոտնաձայները մէկու մը ետեւ վազող մարդու ոտնաձայներ չէին, արագ արագ իրարու յաջորդող ոտքերու հանած աղմուկին չէր նմաներ: Աղմուկ ըսի, որովհետեւ վազող մարդու մը իրար հրմշտկող քայլերու ձայները տեսակ մը ինքզինքէն դուրս ելած մարդոց կը նմանին, կարելի չէ զանոնք համարանքի ենթարկել, քանի որ անմիջապէս՝ երբ գետնէն օդին մէջ կը ցատկեն, իրարու կը խառնուին, իրարու կը խճճուին, մէկ խօսքով՝ ոտնաձայն ըլլալէ կը դադրին, ըլլալու համար անորոշ, անդէմ աղմուկ մը: Ամէն պարագայի՝ երկվայրկեանի մը ժամանակամիջոցին, որուն ընթացքին ես կանգ առած էի, ոտնաձայներն ալ կանգ առին: Ինչ որ խորհիլ տուա ինձի՝ թէ անոնք ինձի հետ կապ ունեցող բաներ չէին, եւ սկսայ վերստին քայլել: Եւ նույնհետեայն՝ ոտնաձայները եւս վերսկսան բարձրանալ կոնակիս ետեւէն: Յանկարծ յիշեցի, մտաբերեցի, անոնք իրապէս ոտնաձայներ էին, հատիկ հատիկ, համաշափ ու ծանր, ծանր բեռնուած ըլլալու պէս, կարծես ամէն մէկ ոտնաձայնին մէջ՝ երկրորդ ձայն մը կար, բայց թաւ, մութ ու խիտ, եւ անոր մէջ ալ՝ ուրիշ ձայն մը, անելի կտրուկ, կարճ, ծնածին պէս մեղմող, նման իրարու մէջ դրուած այն տուփերուն, որոնք իրենց ամբողջութեամբ՝ բազմազանակ տուփ կը կոչուին: Ոտնաձայները, որոնք սկսան բաժնուիլ դուրսի տարածութենէն եւ քաշուիլ կամաց կամաց, ամփոփուիլ գլխուս մէջ, կը քայլափոխէին, փոխուած քայլերու ձայները կու գային բախիլ ճակատիս ներքին խափն, մաշկին, ու հոն՝ կ'իմաստաւորուէին: Ընդհանրապէս՝ թաւ ու հաստ ձայներէ բաղկացած էին այդ ոտնաձայները, Կապրիէլ Տորէի թաւջութակի համար գրուած ցալգերգն ըլլար կարծես, ինչ որ հետեւեալ ձեռով կարելի է մեկնաբանել: Ձայները ետեւէս կու գային, տակաւին Վարսուեաններու փողոցին մէջ: Փոքրիկ փողոց մըն էր Մանուկենց փողոցը, կարճ ու նեղ, գլխէդ վեր եթէ նայէիր՝ երկինքը ժապատէնի երիզ մըն էր: Ցերեկներն անգամ՝ ձայները անկէ կը բարձրանային, իրարմէ ոչ շատ հեռու, շէնքերու պատերուն զարնուելով, մէկ կողմէն միւսը, ինչպէս ձայները՝ որ կ'ելլեն բազմապատկուած հոփի մը մէջէն, լեցուն ու կուռ, ու գիշերը՝ անելի եւս խուսցած ու ծանրաբեռնուած էին, շնորհիւ փողոցի բացարձակ ամաչութեան: Անոնք անա ձգախեղձ ցատկաւոր գնդակներու նման՝ կրնային ափիդ մէջ իյնալ, եթէ ափդ բացալու ըլլայիր: Բայց ինչո՞ր համար ետեւէս կու գային, ըսի, երբ սակայն այդպէս չէր: Ըսածս պարզապէս լեզուական սովորութեան մը արդիւնքն է, ըստ որուն՝ բոլոր ոտնաձայները մեր ետեւէն կու գան: Գոնէ այդպէս չէր երբ Մանուկենց փողոցն էի, ոտնաձայները օդին մէջ չէին

բարձրանար, այլ կ'իյնային, այդպէս, ամէն մէկ քայլը ծանօթէն կ'իյնար նախ կապարի նման, որ ինկած տեղը կը մնայ, որուն կը հետևեր երկրորդ ձայն մը, առաջինին փշրուած ձեռք, որով ան վեր կ'ելլեր տարտղնուելով, տարածուելով, մեզ չորս կողմերէն պաշարելով, եւ վերջապէս՝ կայծի նման բան մը, որ ծնածին պէս կը մեռնի, ճոզած ձայն մը կը հանէ, ու անմիջապէս կը մարի, կ'անէական, ոտնաձայնին վախճանը անտելով: Եւ այդ ատեն՝ ոտնաձայնը կը մեռնի, կը թաղուի լուսթեան մէջ, բայց հազիւ թէ ականջը լուսթեան պիտի վարժուի, եւ ականջին տերը պիտի հանգչի վերջապէս, լքելով իր ուշադրութեան լարուածութիւնը, որ անսովոր յոգնութիւն մը կը պատճառէ իրեն՝ յաջորդը կը ծնի անմիջապէս ետքը, նոյնպէս ծանօթէն, կապարի նման, փոշիի նման ալ սփռուելով, ու վերջապէս ցնդելով միջոցին մէջ, կայծի փոքրիկ, աննշան պայթումով մը, եւ այսպէս՝ շարունակաբար: Իրապէս՝ ջիղերս սաստիկ անհանգիստ էին: Ամբողջ ջղային դրութիւնս կծկուած էր, եւ քանի որ ինքը անկարող էր վերջ տալու այդ ոտնաձայներուն, որոնք անողորմաբար կը ջլատէին զինքը, միտքս զօրակոչ մը հռչակած էր, անոնց չէզոքացման պայքարին համար, բայց միտքս նոյնքան անկարող էր բնաջնջելու այդ յամառ ու անհանուն ոտնաձայները, եւ իրենց կը մնար սունուազն՝ զիս զինուորագրել, երթալ սպաննելու համար պարզապէս, բնաջնջելու համար այդ ոտնաձայներուն տէրը, կամ շատ շատ՝ անոնց շեշտը փոխելու համար, քանի որ նկատեցի թէ ձայներէն անելի՝ անոնց շեշտն էր՝ որ իմաստ մը կու տար ձայնին, զիս անհանգստացնող, ջղայնացնող իմաստ մը, այն աստիճան՝ որ պէտք է կարենայի անոր վերջ մը տալ, ու ջնջել այդ անուանելի ոտնահարումները: Բայց որպէսզի գոնէ դիմագիծ փոխէին շեշտ փոխելով, պէտք էր գիտնալ թէ ո՛ր կը գտնուէր ոտնաձայներուն տէրը: Ի հարկէ՝ ետես չէր: Եւ ինչո՞ւ ետես պիտի ըլլար անպայման, երբ առջեւ կրնար ըլլալ անելի հաւանականօրէն, ոտնաձայներուն ընկալումը պէտք է առջեւէն տեղի ունենար, քանի որ ականջները ընդհանուր առմամբ՝ դէպի առջեւ բացուած են, եւ զոց են ետեւի կողմէն: Միայն թէ առջեւն ալ մէկը չկար, փողոցին կարճութիւնը այդ ապահովութիւնը կու տար ինձի, կը շնորհէր: Ինձի պէս կարճատես մը անգամ յատակ կերպով կրնար տեսնել: Փողոցները լաւ լուսատրուած էին, ցերեկուան պէս: Ստուերներու կամաչական խաղեր երեսակալելը անելորդ էր, հետեւաբար՝ յաջորդ փողոցը ըլլալու էր մարդը, մէն միմակ, իրեն ազատ ասպարէզ տալու համար ուսումնասիրուած, չափուած ձեռուած ոտնաձայներ կազմակերպելով: Այս մտածումը հազիւ իր շրջանը կատարած մտքիս մէջ՝ ուրիշ մը, նախկինը ժխտող մը անելի քան անոր մէկ պաշտպանը, եկա հաստատել հակառակը. ոչ միայն անկազմակերպ էին անոնք, այլ ձայնին առաջին շեշտին մէջ էր անոր բուն յատկանիշը, որ ինքնալքում մըն էր: Կապարի նման ինկող քայլը ինքզինքը մոռցած մարդու մը քայլն էր,

կամ ինքզինքը տեղ մը ձգած, ինքզինքէն բացակայ, այդ էր պատճառը՝ որ քայլերը գետին կը նետէր, կը փշրէր ու վառօղի պէս վառելով՝ կը ցնդեցնէր շուրջբոլորը: Յաջորդ փողոցը մտնելուս, երկու երեք քայլ առնելէ ետք՝ նոր կարգադրութիւն մը խորհեցայ, ճարտաստ: Փողոցը շատ երկար էր, ու իմ բնակարանս այդ փողոցին ծայրը՝ փոքրիկ փողոցի մը մէջ կը գտնուէր: Եթէ հոն ալ մարդ չկար, կը նշանակէր որ շատ ուշ էր, ինչ որ քիչ մը ետքը պիտի հաստատէի նամակատան ճակատին հանգչող խոշոր ժամացուցիկն վրայ պզտիկ ակնարկ մը նետելով: Հոս փողոցը բոլորովին անաղմուկ չէր: Սրճարանները գոց էին, բայց գիշերային սրճարանները բաց էին, այսինքն՝ կ'աշխատէին, թէև գոց դռներու ետին, եւ այդ պատճառով իսկ՝ անոնցմէ բարձրացող աղմուկները խորունկէն կու գային մինչև հոս, տեսակ մը կասկածանքով, ամօթով, գոց դռներու ետէն եկող շփոթ աղմուկ՝ որուն մէջ միտքը տուաչտազին պատկերներ կը յօրհնէ, կոխ, անարգուն կիներու դիմադրութեան կանչեր, կամ լալահառաչ երգիչներ, եւ այլն: Երբ պատահաբար՝ անոնց դուռը կը բացուէր պողոտացող զինով մը դուրս նետելով, ետեւէն կը խուժէր հսկայ անասունի արտաշնչումին պէս բան մը, բայց զիս մտահոգողը անձանօթ ոտնաձայներն էին: Դժբախտութեան մը, մեծ տառապանքի մը մէջ էի, որ զիս կ'ստնէին, կը տանէին: Դոք, դոք, դոք, համաշափ, ինքզինքին մէջ պլլուած մարդու մը այս ոտնաձայները, որոնցմէ եօթա մը, նշանակեց մը անգամ չէր փոխուէր, յար եւ նման մէկը միւսին, պնդող, յամառ, ինքզինքը չլքելու հաստատ վիճակ, եւ սակայն արդէն լքուած, ինքզինքը լքած կապարի նման ինկող ձայնին մէջ, անոր նման փշրուող, ու վերջապէս՝ անկացող, մեռնող կայծի մը պէս: Միշտ այդ պահուն էր, որ կը խորհէի փոխել վարուելակերպս. փոխանակ ներգործական միջոցներու դիմելու, յաղթահարելու համար զիս անդադար պեղող հարուածները, պէտք է գործէի կրտսրական ձեռով, եւ արդէն պարտադրելու վրայ էի ինքզինքիս այն թելադրանքը՝ թէ պէտք է մոռնալու տայի բոլորովին այդ աղմուկներուն գոյութիւնը, կրկնելով անդադար եւ ինձի՝ որ ո՛չ մէկ աղմուկ կար, որ բացարձակապէս երեսակայական էր եղածը, որ չկար վերջապէս, բան մըն ալ չկար, ամենուրեք՝ լռութիւն է, որ կը տիրէր: Երբ կանգ առի փողոցին միւս կողմը անցնել առաջ, խորունկ լռութիւն մը կը տիրէր ի հարկէ գիշերուան ամենախորունկ ժամուն: Երբ ոտքս վերցուցի, զայն վերստին գետին դնելու վրայ ըլլալով, բայց տակաւին չդրած՝ այն զգացումը ունեցայ՝ որ իմ ոտքս էր, անհա պիտի սկսէի, պիտի վերսկսէի տխրահունչ ոտնաձայները: Ոտքս օրին մէջ պահ մը առկախ մնաց, բայց ի վերջոյ՝ գետին ինկաւ, շարտուած բանի մը պէս, սատկած շունի մը պէս: Առաջին դոքին իսկ զգացի, որ ան իմ քայլս էր, իմ ոտնաձայնս: Չայնը իմանալու պէս, ինչպէս սարսափէ բռնուած մը, տեղն ու տեղը անշարժացայ, բայց երկար չտեսեց անշարժանալս, իրականութեան մէջ՝ անկէ անմիջա-

պէս վերջը շարունակեցի շարժումս, որովհետեւ անյագորդ ծարաւ մը կար ներսիդիս՝ դոք դոքը կրկին իմանալու, մինչեւ կոկորդս բարձրացած ծարաւ մը, ու հոն խճճուած, թուքս կլլելը արգիլելու աստիճան: Հիմա որ ոտնաձայները իմս էին, անոնք ինձի կ'երեւէին իբրեւ հաշելի, որուն մէջ կը ցոլանար դէմքս, իմ դէմքս, թշուառական, ողորմելի արարածի մը դէմքը, որ իմս էր, եւ ես՝ անով կը յիփանայի, կ'որոճայի զայն մարտելու համար, յանձնուելէ առաջ անոր, կրկին ու կրկին վաշելելու համար զայն, առանց հասկնալու անոր դրդապատճառը, որովհետեւ միաժամանակ՝ յիփանալովս հանդերձ՝ նողկանք մը կը խառնուէր յիփացումիս, եւ ես յանկարծ սրատես դարձած աչքերովս՝ յստակօրէն կը տեսնէի հաշելիին մէջի դէմքին վրայ կարծես թէ հակառակ ուղղութիւններէ եկող ստուերներ, որոնք իրարու կը բախէին, ու չէին կորսնցներ իրենց առանձնաչատկութիւնները իրար զարնուելով հանդերձ, չես գիտեր ի՛նչպիսի գերագոյն վճռականութեամբ մը պահպանել ձգտելով երկդիմութիւնը, այսինքն՝ տառապելու եւ հաճոյանալու վաշելքները միեւնոյն ատեն, ոտնաձայներու զանազան խաւերը, իրենց թերթ առ թերթ կազմութիւնը, եւ հակառակ անոնց այլազանութեան՝ ինձի այնպէս թուեցաւ՝ թէ անոնք զատ զատ նշանակութիւններ ներկայացնելէ աւելի՝ փոքրիկ, անհատական անդէլի ողբերգութիւն մը ցոյց կու տային, որուն եւ միայն այդ ձեւով կրնայի տեղեկանալ առանձին առանձին մեկնաբանելով զանոնք: Ոտնաձայներու կապարայիցն ծանրութիւնը, ըստ անոր հանած ձայնին, լեցուն, կոտ ու թաւ յանկարծական անկումը գետնին վրայ եւ անոր փոշիացումը իր երկարաձրգող ալիքաորումներով օդին մէջ, եւ կայծին վայրկեանական անհետացումը, չնչին ճիշի նման աղմուկովը, իրականին մէջ՝ նոյն բանն են, նոյն իրողութեան եղանակաւորումը: Ըստ գիտութեան՝ բոլոր զանգումները նոյն արագութեամբ կ'իջնան, միայն օդին ներկայութիւնն է, որ կ'ապահովէ իրենց այլազանութիւնը, անհատականութիւնը, զորս կը կորսնցնեն օդէ պարպուած միջավայրի մը մէջ: Ատկէ՝ դիւրին էր հետեցընել, որ բան մը պարպուած էր, պարպութիւն մը գոյացած էր իմ էութեանս ներսը, որով կարելի եղած էր իմ ոտնաձայներուս գոնէ իմ գիցած երեք խաւերուն՝ մի միայն մէկ բան ըլլալը, մի միայն դոք մը ամբողջ ներքին տարածութեանս մէջ, պարպուած Շուշանի ժեսթով:

Ճիշդ այդ պահուն՝ երբ կը գտնուէի լայն պողոտային բերանը, ծովախորշին դիմացը, պաղ հով մը փչեց ծովուն բացէն, գրեթէ փոքիս վրայ, ճիշդ ու ճիշդ աչ անուկիս եւ զիստիս ամենափափուկ մասին վրայ ցրտութիւն մը զգացնելով ինձի: Մոռցեր էի, եւ քամին եկաւ զայն արթնցնելու միսերուս մէջ: Թիտակը ըսած՝ աչ անուկէս վար զիստիս կակող մասին հասած շերմութիւնը ի վերջոյ շփոթուէր էր զիստին շերմութեան հետ, եւ անոնք զիրար չէզոքացուցեր էին, երբ յանկարծ՝ ծովէն փշող քամին եկաւ

պաղեցուց: Պաղելով, սպեղանիի մը նման, իր գոյութիւնը զգացուց, որ գիտակցութենէն արտաքսուած էր, եւ կրկին կը ներկայանար, իր բոլոր մասնաշատկութիւններով, առանց որեւէ դիտումնաորութեան սակայն: Ո՛չ մէկ նպատակ ունէի այդ պահուն՝ վերապրելու վերոյիշումով. մանաւանդ ցրտութիւնը: Յրտութիւնը քամիէն աւելի՝ թացութեան հետեւանք էր. առանց թացութեան՝ քամին չէր կրնար տալ ի հարկէ պաղիւն տհաճ զգայութիւնը, բայց անհիկա անմիջապէս անոր առջեւ բացաւ չերմութեան ուղին, եւ շերմութիւնը՝ հասած սերմին, թափանցիկ ու լարծուն սերմին յատկութիւնն ըլլալով՝ շերմութիւն եւ յատկութիւն միեւնոյն ճիւթին մէջ միախառնուած՝ զարմանալի եւ անակնկալ հաճոյքի մը բացառիկ եւ անկարելի երանութիւնը բերած էին(\*): Զիտոսի վրայ սատոյցի նման փակած ցրտութիւնը մոռցայ, եւ աչքերուս առջեւ յայտնուեցան Մանուկին մայրը, իր եւ աղջկան Ամիրեաններուն տուած սենեկային տաքութիւնը, գաւաթներէն բարձրացող տաք թէյին շոգին, տիկիներու շունչի տաքութիւնը, որուն մէկ նմոյշ էր Տիկին Վարսուեանի շունչը երբ կը խօսէր. մերթ ընդ մերթ արտորանքով կամ դանդաղ, հանդարտ յափտեմութիւնը ապահոված մէկու մը նման, մէկու մը՝ որ երբեք պիտի չմեկնի այս աշխարհէն, ինչպէս թէ այս աշխարհը միայն իրեն համար շինուած ըլլար: Իսկ յանկարծական արարքներուն բուն պատճառը, որ միայն հիմա է որ կր հասկնամ, ուրիշ բան չէր եթէ ոչ հսկայ ուժի մը թաալումը վրադ, մասնաոր պատգամով մը, յետին նպատակով մը՝ դիմացինը լռութեան դատապարտելու, այսինքն՝ զինքը ենթարկելու իրեն, հպատակեցնելու, թիթէն բռնած՝ ուզած տեղը տանելու վճռականութեամբ: Հիմա է որ այս հրակայական ռազմավարութիւնը ինձի կ'երեւայ յատկօրէն, ուրիշ բան չէր կրնար ըլլալ արդէն երբ Տիկին Վարսուեան առաջին անգամ ըլլալով կը յայտնուէր իր շողշողուն անձովը, յանկարծակի բացուած դրան մէջ լոյսով փայլատակող իր դէմքովը, դէպի ինձ կը յառաջանար, ձեռքը ինձի երկարած, նախապէս անկէ ետ առած ըլլալով մինչեւ արմուկը երկարող իր լայնավիզ ձեռնոցը, որ նուրբ մետաքսանման ու սելի գոյն մորթէ էր, զայն ձախ ձեռքին մէջ դրած ըլլալով, «Ա՛խ» ընելով, կարծես՝ վրան մարմնութեան կու գար, «ա՛խ, կը ներէք, Պարոն Արմէն, ցաւակցութիւններս», եւ ձեռքը փափկօրէն դնելով իմ ձեռքիս մէջ, ու զայն պահելով այնքան ատեն որ կը տեսէր իր ճարտասանութիւնը: Հազիւ այս տողերը գրած, մեկանը չչորցած տակաւին, կը ճշմարեմ գրած տողերուս մէկ թերութիւնը, թերութիւն մը որ ինձի յատուկ չէ, որովհետեւ պարզապէս խաբկանքի մը ներգործութիւնն է: Հիմա անա՛ պչքերուս առջեւն է Տիկին Վարսուեանը իր պէծփումներով, եւ կը խորհիմ թէ ինչպէ՛ս կրնայ ձեռքս ձեռքին մէջ պահած ըլլալ մինչեւ իր ճառին աւարտը, քանի որ անդադար կը կոտորտուէր իր մարմնին այս մասը, երբեմն վարի մասը աչքամուխ ընելու թաքուն, թերեւս ալ անգիտակից դրդումով, հետեւաբար՝ աւելի խորապէս

ճնարիս քան թէ գիտակցուած արարքը: Պէտք էր շատեց ձեռքս լքած ըլլար, իր ճակատագրիսն պիտի ըսէի, բայց իր բախտին ձգած պահուն իսկ՝ անոր մէջ ներարկած պիտի ըլլար արդէն իր գարմանալի կնոջական իգութիւնը: Այդ էր պատճառը՝ որ ինձի ալն տպաւորութիւնը կու տար՝ թէ երկար ատեն՝ ձեռքը ձեռքիս մէջ էր, եւ կը գործէր այնպէս՝ ինչպէս պիտի գործէր եթէ բնաւ բաշտիլ չըլլար աշխարհի վրայ: Ապիս մորթին վրայ դրոշմուած, տամուկ ու ճամուկ, անոր ձեռքին շերտութիւնը կը պահպանէր իր տեսողութիւնը, մինչդեռ ան վերացած՝ կը ճառէր, ձայնին մէջ թըրթըռումներով, երգիչի մը նման՝ որուն ձայնը մինչեւ գլուխը կը բարձրանայ ու կ'իջնէ մինչեւ կուրծքին մատանները, եւ ասոնք էին, որ բառերէն աւելի իրենց ազդեցութիւնը կը բանեցնէին մինչեւ յետին անկիւնները. իր դերասանական շարժումները կու գային ու կը զգուէին, կը շոյէին, կը փայփայէին աչքերս, որոնք հետզհետէ՝ կը զգային ծանրութիւն մը, որ ուրիշ բան չէր եթէ ոչ սեղմում մը ամբողջ էութեանս, առնուած իր երկար, կեռասի գոյն մատներուն մէջ, այդ՝ մատներուն, հոսանիքին թանձր ու ծանր հոսքը իր մատներովը կատարուեցաւ, եւ ալն ատեն միայն՝ երբ անոնք լեմոնի մը պէս քամեցին մինչեւ յետին կարթիլը՝ յանկարծ խօսքը իր տղուն ուղղեց այնպիսի ձեռով մը՝ որ կարծես քամած լեմոնի կեղեւն է որ մէկդի կը շարտէր: Յետոյ անհետացաւ բնակարանին մութ անկիւնները, աղջիկը հետը տանելով, դահիճին պէս՝ որ մահապատիժը գործադրելէ ետք գլխատուած մարդուն գլուխը կոճղին քովը ձգած՝ կը հեռանայ տեսարանէն, կացիւնը կամ թորը հետը, ձեռքին ծայրը:

Առաջին հերթին գլուխը տղուն կողմը դարձուցած ատեն՝ աչքին ծայրէն ինձի արհամարհական նայուածք մը նետած էր, եւ զայն անմիջապէս յետոյ՝ ետ առած, սրտին մէջ ահով, բայց եւ այնպէս՝ ժամանակ ունենալով իմ ներսի լարերուն վրայ ազդեցութիւն գործելու: Հոն տարօրինակ հակազդեցութիւն մը ունեցաւ: Կարծեցի թէ ուրիշներէն տեսնուելու վախը իրեն պարտադրած էր այդ խուճապային փախուստը, թէեւ ո՛չ արտաքին, տեսանելի, այլ՝ զգալի միայն, շեւ գիտեր ի՛նչ թաքնաթաքնոր շերտփուկներով: Կարելի է ըսել արտաքուստ տեսնուածէն անկախ՝ ուղղուած էր մեծ ու ինքնագոհ, քիչիկ մըն ալ չարանճի ու գռեհիկ ձեռով՝ անմիջապէս պարտկուած տղուն, Մանուկին խօսելու պատրուակով: Սկսած էր ներքին փոթորիկը որոտալ, որուն ընդմէջէն ճամբայ մը կը փնտռէի, վերածնելու համար: Բարեբախտաբար՝ նորէն Մանուկը, դիտմամբ թէ անմեղութեամբ, օգնութեան հասաւ: Հազի Տիկին Վարսեան եւ իր աղջիկը՝ Անահիտը, բաշտեցան սենեակէն, Մանուկ հսկող շունի մը պէս մէկ աչքը բանալով՝ ըսաւ. «Կեցցէ՛, Արմէն, մաշիկիս աչքը խածիր», մինչդեռ ես իրմէ եկող անարգանքին տակ կը մղկտայի բարկութիւնս որոճալով, ու կ'երդուրճնայի վրէժս լուծել օր մը, զայն տակա առնելով,

միտքս կը դնէի անդադար, կարծես առանց կարենալ յագենալու՝ «ես քեզի ցոյց կու տամ, ես քեզի ցոյց կու տամ», մանաւանդ որ սերմնահոսութիւնը սկսած էր պարտութիւն մը երեւալ ինծի: Ինչպէ՛ս, կը խորհէի, լակոտի մը պէս թոյլ տոտի որ ուզածը ընէ...: Ահա՛, հիմա հասկցայ, իմ յոյսորտանքըս է՝ գոր փորս խոթեց. «դուն աչնպէս ուզեցիր, ես ալ քեզի ցոյց կու տամ թէ ինչպէ՛ս փորը կը պարպեն, լակոտ»: Արդարեա՛ ի՞նչ եմ ես այս հին ազնուականներու աչքին: Այնքա՛ն անպատկառ եմ, այսպէս կամ այնպէս, գլուխդ քիչ մը վերցնես՝ անմիջապէս զայն գետին կը նետեն, չի-շեցնելով որ շափ մը կայ, որմէ անդին անցնելու իրաւունքը չեն ճանչնար քեզի համար: Տիկին Վարսուէան մտերմութեան պահերուն՝ մասնաւոր հաճոյք մը կը զգայ Տիկին Երազեանին բարձր հովերը վարկաբեկելու, տեսնելիք բան է, երբ սմտեղով դարձուածքով մը ձայնին մէջ՝ Տիկին Երազեանը զովելով ու զովասանքը ժխտական դարձնելու հաճոյքով՝ Տիկին Երազեանը խեղճ ու կրակ բանի մը կը վերածէ: Բայց ինչ որ ինքզինքին՝ կ'արտօմէ, ամբողջ մը պաշտպանելու կոչուած հրամանատարի մը նման անողոր՝ ուրիշ որեւէ մէկուն չի թոյլատրեր - կարծիք մը ունենալ դէպքերու ընթացքը որոշելու գործին մէջ:

Ըսի՛ որեւէ մէկուն, մանաւանդ՝ ինծի: